

ԱՐԵՒԵԼԵԱՆ  
ՄԱՄՈՒԼ

ՀԱՆԳԻՍ ԱՄՍԵԱՅ

ՉՈՐՐՈՐԴ ՅԱՐԻ

1874

ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՊԱՐՈՒՆԱԿԱՅԻԹԻՆ

ՊԵՏՄԱՌԹԻՆ

ԿՈՎԿԱՍ

ԿՐԹՈՒԹԵԱՆ ԻՆՏԻՐԵ ՀՈՐԵՑ ՄԵԷ

ՈՐԵՆՈՊՈՏԻՒ Ս ՊԵՏՐՈՎԻՆ ՄԵԿ ՆԱՄԱՐ

ՏՈՐՄԻ ԷՆՏԱՆԵԱՆ

ԱՊԵՏՈՒՆԵԱՆ ԷՆՏԵՐՈՒԹԻՆ

ՀԱՂԱՔԱԿԱՆ

ՈՍԼ ՆԻ ԱՅԼԻ

ԷՄՈՒՐԻ ՄԷ ՆԱԶԱՆԵՐ

ՉՄԻՒԹԻՆ

ՏՊԵՐՐՈՒԹԻՆ ՏԵՏԵԵԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ

# Մ Ա Մ Ո Ւ Լ

Դ՝ ՏԱՐԻ

1874

ՀՈԿՏԵՄԲԵՐ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ\*

Մովորաբար՝ ֆսենտֆօն, թէև առանց բանաւոր պատճառի, Հերոս  
գլոտտին և Թուրիդիգէսին կարող է՝ դատուի: Ասոնց կ'նմանի, արդար-  
և, իր ոճին յստակութեան և անուշութեան կողմէ, բայց ոգւով աւելի  
կ'նմանի այն վերջին պատմադիրներու դատուն՝ որոց զօրծերն բարոյական  
խրատ հանելու մտքը յօրինուած առասպելներ կ'ընկնէ, և որք՝ մեզի  
յորդորներ և օրինակ տալու եռանդով վառ՝ կ'մոռնան մեզի մարդիկ և  
կիներ տալու: Կլարոսի կեանքը, թէ իբրև պատմութիւն և թէ իբրև  
վէպ նկատենք, մեզի մի խիստ ողորմելի երկասիրութիւն կ'երևի: Բիւս

\*Տե՛ս երես 329, 369:

53

բույ Արշաւանն և Յունական Գործոյ Պատմութիւնն անտարակոյս ախորժակի բաներ են կարգալու, բայց մտաց մի մեծ զօրութիւն չեն յայտնեց: Իբրաւի, Քսենոփոն, թէ և իր ճաշակը կիրթ, իր արամադրութիւնն սիրալիր, և ընկերութեան հետ յարաբերութիւնն ընդարձակ, ըստ մեզ՝ տկար զլուխ մ'ունէր: Անտարակոյս այս էր նաև այն կարգէն զուրս մարդուն կարծիքն՝ որու հետ մանկութենէ կապուեցաւ և որու յիշատակին համար կաթողին պատկառանք կ'տածէր: Բաւական կ'համարէր միայն այն կաթն որով Սոկրատէս իր երեխաները կ'սնուցանէր փիլիսոփայութեան մէջ: Մի քիչ բարոյագիտութեան փշրունք, մի քիչ ալ բնական կրօնի ամենապարզ մասունքը հերիք էին նորահասակ պատանեկէն համար: Զօրաւոր կերակուրը, բնական և զերբնական գիտութեան վրայ յանդուգն տեսութիւններն տարբեր կարգի ունկնդիրներու համար վերապահուած էին: Նոյն իսկ վարձկան զօրաց հրամանատարի շուայտ սովորութիւններն Քսենոփոնի վաղադոյն ստացած բնաւորութեան ուղղութիւնն անկարող էին այլայլել: Մինչև վերջը՝ Քսենոփոն՝ ինչպէս որ կ'երեւի, մի տեսակ հեթանոսական Մաքրակրօնութիւն պահեց: Բարեպաշտութեան և առաքինութեան զգացումներ՝ որով առիւ են իր երկերը, մի բարեմայն մարդու զգացումներն են, թէ և փոքր ինչ վեհերոս և կարճամիտ, ի բնէ բարեպաշտ քան թէ բանաւոր համոզմամբ: Հերոդոտոսին չափ աւելորդապաշտ էր նա, բայց շատ առելի ֆնասաբեր կերպով: Այն հանդամանքն իսկ զոր մի մանկան վրայ տեսնելով կ'զմայլենք, թոթովատ մրմունջներ, կակաղումներ, զայթոտ քայլեր, անճարակութիւն, անպատահարտուք ու ծիծաղ, մի ծերունիի վրայ զգուշելի են: Մի և նոյն կերպով՝ ընդհանուր իմացողութեան մի ժամանակէ առաջ եկող անհեթեթ բաներն ստեպ հաճելի են, բայց անկիւ պերջը հետեոյներն արհամարհելի: Հերոդոտոսի սեռիքն մի երախայի աղճատանքն են. իսկ Քսենոփոնի սնոտիքն մի զաւանջող ծերիկն են: Երազներու, նշաններու և դուշակներու մասին պատմած զրոյցները մի զարմանալի հակապատկեր կ'ընծայեն այն նկարագիրներու հետ որով ներդաշնակ և թերահաւատ Թուրկիդիդէս դուհիկ աւելորդապաշտութիւնները կ'յիշէ: Բոլորովին յայտնի չեմք իր Գսենոփոն իր զիւրահաւանութեան մէջ անկեղծ լինի. իր միլեաւանդութիւնը գրեթէ ի վերին երես էր: Առաքելական ժողովապետ (camarilla) մի ընտիր անդամը կրնար լինիլ: Ինք ի ծնէ զիւրախութիւն, կուսակցութեամբ աղնուպետական էր և ժողովորդական յուզմանց համար ունեցած սոսկումն անհնարին աստիճանի կ'հասցընէր:

Սպարապետի անդորրը դաժանութիւնն մի և նոյն կերպով չէին քստմեցը-  
նէր զիրեքը, վասն զի խռովութիւնն աւելի կ'ատէր քան ոճիրը: Ա' փա-  
ռաքէր նա խռովանին կրկն սանձ դնելու համար բռնուն միջոցներ  
դնեն, և անհետ թե ի՛նչ երևակայէր թէ այս միջոցները դատած է ա-  
պացոյց կամ վաւերականութիւն, կանոն կամ օրինակ չունեցող կրօնքի  
մը մէջ, այս է Աստուածամարդասիրութեան մի պաշտօնը թուութեան մէջ՝  
որ պառտական վէպերու վրայ հիմնեալ է:

Պոլիսիոս և Արիանոս իրողութիւններու ճշգրիտ նկարագիրներ  
տուած են մեզ, և այս է իրենց բոլոր արժանիքը: Լայն իմացականու-  
թեան մարդիկ չէին. հետաքրքրաշարժ կերպով մի վէպ պատմելու ա-  
բուետը չգիտէին: Ուստի նսեմացան այն մատենագիրներու կողմէ,  
որ, թէև իրենց չափ ճշմարտութեան հետապնէին չէին, ներդրածու-  
թիւն ազդելու հնարը լաւ ևս գիտէին, ինչպէս են Ալիսիոս և Ալիստոս  
Աուրաիոս:

Բայց և այնպէս Պոլիսիոս և Արիանոս մեծ գովեստից արժանի են,  
երբ զանոնք բաղդատենք այն մատենագիրներու գալոցին հետ որոց  
զլուխ կրնայ համարուիլ Պլուտարքոս: Պարտինք խոստովանիլ որ այս  
դասու պատմաբաններու զէմ յատուկ ատելութիւն մ'ունինք: Ըստ ե-  
րևոյթին իմաստասէրն էին, որ, թէև իմաստասիրութեան ստեպարակից  
դանուող թանկագին յատկութիւններէ զուրկ, ինքզինքնին մեծ փիլի-  
սոփայ և մեծ քաղաքագէտներու կարող զրեւր էին: Ոչ միայն իրենց ըն-  
թերցողաց ամէն մէկ երեսի մէջ, թիւր գաղափարներ կ'ընծայեն, մաս-  
նաւոր իրողութիւններու մասին, այլ նաև կ'երևի թէ իրենց գրի առած  
ժամանակաց բնութիւնն բոլորովին ծուռ դատեր են: Մի այնպիսի  
սլետութեան բնակիչներն էին, որոնք սահմաններն Ալլաթոսեան ուլիսա-  
նոս և Եփրատ, Սիւլիսիոց սառնամանիքն և Մաւրիտանիոյ անա-  
պատներն էին, այնպիսի աղղերէ կ'բաղկանար՝ որոց սովորութիւնները,  
որոց լեզուները, որոց կրօնքը, որոց կերպարանն ու կազմուածքը, լի-  
ովին իրարմէ կ'զանազանէին, այնպիսի հզօր բռնակալութեան ներքեւ  
կ'կառավարուէր, որ հազարաւոր հասարակագետութեանց և թաղա-  
ւորութեանց աւերակներու վրայ կանգնէր: Այս պատմագիրներն  
չունէին և չէին կրնար ունենալ փորձառական ծանօթութիւն ազատու-  
թեան վրայ, ինչպէս որ կ'զտնուի սահմանափակ հանրավարութեանց  
մէջ, հայրենասիրութեան վրայ, ինչպէս որ կ'երևի որ և է փոքր ան-  
կախ հասարակութեանց մէջ: Բայց ասոնք կարգացեր էին այնպիսի  
մարդկան կեանքն, որ իրենց հայրենեաց դատին համար մեծամեծս

քործեր էին, վերջին ժամանակաց անձանց զօրութեամբ, որ ան-  
յոնին անուշութիւնները զոհեց, կամ յօժարակամ մահուան զիմեր էին  
հասարակաց օգտին համար, և այժմ ասոնք իրենց ժամանակակից  
մարդկան վատթարութեան վրայ կ'զարմանային: Երբէք չեն խորհած  
որ իրենց անչափ զմայլած զղացումներն տեղական և պատահական  
պատճառներու արդիւնքն էին, թէ միշտ մանր ընկերութիւններու մէջ  
ինքնին կ'ծաղին, և թէ՛ ընդարձակ տէրութիւններու մէջ, որչափ որ  
մասնաւոր պարագայից ուժով կրնան բռնապէս զոյանալ, բայց չեն  
կարող ընդհանուր և մնայուն վիճակ մ'ստանալ: Անկարելի է որ մի  
մարդ հեռակայ բերդի մը համար զցայ, ինչ որ կ'ըլլայ իր բնիկ տան  
համար, որ վշտակի պարտութեան մը համար ուր իր երբէք չոտած  
հաղաթուր մարդիկն ընկած մեռած լինին, որչափ որ կ'ցաւ իր այն  
պարտութեան համար, որով իր բնական թաղին կէսն ամալի դար-  
ձոց, որ իշխանութեան հաւասարակշռութիւնը պահպանելու մտօք  
յոռն տեղ թողու և զինուորական արշաւանի մը մասնակցի այնքան  
խնդութեամբ որչափ որ պիտի թողու վանելու այն ասպատակներն որ  
իր մօտակայ ցորենի դաշտերն այրելու սկսած են:

Մեր ակնարկած հեղինակները պարտաւոր էին լաւ նկատել այս կէ-  
տը: Պարտաւոր էին նկատել թէ Յունաց մէջ տիրած հայրենասիրու-  
թիւնն էապէս և յաւիտենապէս մի լաւ բան չէր պարունակեր. թէ  
որչափ որ բնական, որչափ որ՝ քանի մը պայմաններով՝ մի խիստ օգ-  
տակար զղացում է, լիովին մի մասնաւոր ընկերութեան յարումը,  
բայց այս զղացումն իմաստութեան կամ առաքինութեան բարձրագոյն  
ձիրք մը չենթադրեր, թէ ամենուրեք որ այդ հայրենասիրութիւնն  
բռնն աստիճանի հասած է, աւաղակաց մի խումբ դարձած են տէ-  
րութիւններն, որոց փոխադարձ հաւատարմութիւնն աւելի վտանգա-  
ւոր ըրած է զայն, որտեղադմի մի աւելի վայրագ կերպարան տուած է  
և հուսկ ուրեմն ամէն քաղաքական չարեաց յուազոյնն եղած է, այս-  
ինքն իրարու վրայ ազդաց բռնակալութիւնը:

Այս պայմանցիւրներն՝ ողատութեան անուան եռանդոտ կուսակից-  
ներ, անոր սահմանը տալու բոլորովին անփոյթ էին: Սպարապիք  
թէ և բիւր անիմաստ կապերու ներքեւ կ'տանջուէին, թէ և իրենց կա-  
նայքն, իրենց ճաշն, իրենց ընկերութիւնն ըստ հաճոյս ընտրելու ան-  
կարող էին, թէ և մի յատուկ ընթացք բռնելու, թէ և մի որոշեալ լեզու  
խօսելու ստիպուած էին, դարձեալ իրենց ազատութեան վրայ կ'պարծե-  
պային, և ուրիշ աղնուպետութիւնն քանի՛ քանի անդամ ազատութեան

պատրուակաւ ժողովրդեան քիբելիները կտտութեց : Հին սասնն՝ դրեթէ բոլոր մանր հասարակապետութեանց մէջ՝ ազատութիւնն իբրեւ բարոյր յիշէր ազատութեան ղին տուող ամէն բանի դէմ վճիռներ արձակելու , վճիռներ որ վիճաբանութիւնը կ'խեղդէին , արդարութեան միտակարարութիւնը կ'եղծանէին և սեպհականութեան բազմանալու արդեւք կը լինէին : Այն հեղինակներն՝ որոց դործերը կ'նկատենք , ձայնը նիւթին հետ , և միջոցները նպատակին հետ կ'շփոթւին : Իրենց երեւակայութիւնն խորհրդով բորբոքած էր : Ազատութիւնը կ'ըմբռնէին ինչպէս միանձունք կ'ըմբռնեն սէրը . . . : Դիպաց պատմագրութեան և բնաւորութեանց նկարագրութեան մէջ՝ հազիւ 'ի նկատի առին իրողութիւններ , իրենց ճառ եւ կարծած ժամանակաց սովորոյթը , կամ մարդկային բնութեան ընդհանուր սկզբունքը : Մի միայն իրենց գրչին ներքեւ՝ սին և այլանդակ վարդապետութեանց հաւատարիմ գտան : Զօրապետներ և քաղաքադէտներ՝ փառամոլ խմատակներու կերպարանն առած են որոց անխորժ առաքինութիւններէն կ'հեռանանք զգուհոք : Իրենց դիւցաղանց նուրբ ասացուածներն ու քաջագործութիւններն մեր ուշը կ'ածեն Պ. Զաւլս Կրէնտսընի անբերելի կատարելութիւնները և մեզի կ'պատճառեն այնպէս նողկանք որպէս կ'ղղանք երբ՝ Մօրդընի կամ Քօդգէյտուի մէկ թատերդութեան մէջ՝ մի գերասան իր ձեռնը սրտին վրայ կ'գնէ՝ դէպ 'ի սատր կանթեղները կ'քայլէ և բարոյական վճիռ մը կ'արձակէ 'ի շինութիւն ղից :

Այս մատենագիրներն , մարդիկ որ հայրենիք ունենալ ինչ ըսել է չդիտէին , մարդիկ որ երբեք քաղաքական իրաւունք չեն վայելած , հայրենասիրութեան համար ֆնասակար կեղծիք և ազատութեան համար եռանդ իբրեւ նորաձեւութիւն քարոզեցին : Ինչ որ անկիւտցի Մաքրադեններն քրիստոնէութեան լեզուին համար ըրին , ինչ որ սիրոյ լեզուին համար Սկոտերի ըրաւ , անոնք հասարակաց ողուց լեզուին համար ըրին : Սովորական չափազանցութեամբ այս լեզուին մի իմաստ տուին : Միակերպ ուժղնութեամբ զայն ակարթայուցին : Այնչափ չափազայր 'ի դործ դրին զայն որ հազիւ կարելի եղաւ անով ներգործութիւն մ'ազդել :

Իրենց բարոյականութեան սովորական կանոններն ծայրադայն օրինակներէ կ'ծաղին : Ընկերութեան համար իրենց հրամայած առողջապահիկ կանոնն այնպիսի յուսահատական գեղերէ կ'բաղկանայ որ միայն իր ամենէն յուսահատ հիւանդութիւնները կրնան պահանջել : Մասնաւոր յօժարամտութեամբ կ'նկատեն դործեր որոց հաւան գանուողներն

իսկ հանրական դործադրելի օրինաց իրրև բացառութիւններ կ'դատեն — դործեր որ այնպէս սերտյարակցութիւն ունին ամենէն ահաւելի ու ճիւղներու հետ զորս եթէ՝ 'ի հարկին՝ անիրաւ անդամ լինի պարտաւելն, փնտաւար է զովքանեւ չէ Էեաւապէս՝ զարմանք չեն որ նենգութեան և անզլութեան մի քանի եղերներ այս զունակ ընկերութեանց մէջ անպարտաւ անցած լինին, և թէ ծանրադու ի բարոյախօսներ՝ որ և է անձնական փնտսէ աղատ՝ ներբողներ կարգացած լինին այնպիսի դործողութեանց վրայ որոյ դաժանութիւնն ահա սարսափ տուած է այն մոլեղին կուսակցութիւններուն որոյ դատին 'ի նպատտոյն արարքը կատարուած էին։ Թիմոլէօնի մասնակցութիւնն իր եղբորը սպանութեան մէջ իր մի շատ կուսակիցները զարհուրեցուց։ Ասոր յիշատակն ընդ երկար տանջեց իր միտքը։ Բայց քանի մը դար ետքն եւ կող պատմադիրներու վերապահուած էր ցոյց տալու որ Թիմոլէօնի վարմունքն առաքինական վառաւոր դործ մ'էր, և վշտանալու որ՝ մարդկային բնութեան տկարութեան պատճառաւ, այսպիսի մեծ նախաձիւր մը դործող մարդ մը վերջէն ապաշտած լինի։

Այս մարդոց և իրենց արդի հետեողաց գրուածքն մնացորութեան արժանի արդիւնք առաջ բերին։ Անկլիացիք այնքան երկար ժամանակ քաղաքական խնդիրներու վարժեր են, և դործնական աղատութիւն այնչափ շատ վայելէր են, որ այս տեսակ երկեր թեթեւ ներդործութիւն ունեցան իրենց մտաց վրայ։ Մենք ևս ունինք բնիկ դասական դուրդորութիւններ և մեծ անուններ զոր կրնանք ամենայն վստահութեամբ հին ժամանակի փառաւորադոյն անուանց դէմ դնել։ Ծերակոյտ չունի մեզի համար քան Բարլմէնդ պատկառելի ձայն մը։ Մեծ Դաշինքն (Charter) աւելի կ'յարդենք քան Սոյունի օրէնքը։ Կապիտուլիօն և Քօրիւմ այնքան երկիւղալի ակնածութիւն չեն ազդեր մեզ որչափ մեր յատուկ Վէսթմինստը Զինն և Վէսթմինստը Էպէյը, այն վնայն ուր քսան սերունդի մարդիկ վիճաբաներ են, այն վնայն ուր այժմ միասին կ'ենջեն։ Մեր Սահմանադրութիւնը հիմնող կամ պահանող դժբախանաց և քողաքաղիտաց ցուցակն՝ Մօնթօրդէն սկսեալ մինչև Քօքս կարող է բաղդատութեան մասնէ Հռոմի շահատակներու հետ։ Սիանէյ յի ոգեսպառ շնորհակալիքն այնքան աղնիւ են որքան են Թրասէայի առ Աղատարարն Արամազդ ուղղած նուէրները, և ընդհատ ախորժանօք իր աղիքը պատառող Վատոնը կ'յիշենք քան թէ Ռըսէլն՝ երբ իր կողակցէն հեռանալու առթիւ կ'ըսէր թէ՝ «Մահուան դառնութիւնն անցաւ»։

Մեր պատմութեան այն մասերն իսկ, որոց վրայ՝ քանի մը պատճառաւ՝ քոչմը ձգեւ յօժարամիտ կ'զանուինք, կարելի է մեծ առաւելութեամբ զիմազրել այն մասերուն՝ որոց վրայ Հին բարոյադէտներն շատ կ'ախորժէին ծանրանալու։ Անկլիական աղատութեան թշնամին չսպաննուեցաւ այն մարդիւն ձեռք, որոց ներքը և առաջածները էր։ Քամակէն դաշտն չընդունեց այն մարդիւն ձեռք որ անոր երեսին կ'ժպտէին և կ'շնթէին։ Այլ կանոնաւոր ճակատամարտի մջնկունքնկաւ, 'ի դատ կոչուեցաւ, դատակնիքն ընդունեց և երկնից ու երկրի յանդիման զլիառուեցաւ։ Մեր աղատութիւնն ոչ Յունական է և ոչ Հռոմէական այլ է ապէս Անկլիական։ Ընդամէն մի գործմ ունի — գործմ՝ որ առպետական դարերու զգայմանց դոյն առած է, և մեր նախատիպ սովորութեանց ու կրօնական կայութեան հետ կ'յարմարի։ Նոյնպէս իրեն բնիկ մի լեզու ունի, մի լեզու որ յատկապէս տոհմային է, մեզի համար իմաստալից, իսկ օտարականներու հազիւ ուրեմն ըմբռնելի։

Հետևապէս աստանօր, մեր ակնարկած գրեանց ներգործութիւնն անմիաս եղած է։ Արդարեւ՝ Հին պատմութեան մասին մի շատ թիւր կարծեաց ճարակ առին, տղոց երեակայութիւնը բորբոքեցին, քանի մը դրադէտներու դատողութիւնը մոլորեցուցին և ճաշակն եղծեցին, բայց հասարակային գործոց հետամուտ անձերու վրայ գոյն ինչ ազդեցութիւն ունեցան։ Մեր Սահմանադրութեան հիմունքն այնպիսի մարդոց ձեռք գրուեցան որ յունաց մասին չգիտէին այլ ինչ բայց եթէ ասանք ուղղափառական բղխումը կ'ուրանային և խաչակիրները խարեր էին, նոյնպէս Հռոմի վրայ ուրիշ բան չգիտէին բայց եթէ Պապն անդ կ'բնակէր։ Այս սահմանադիր մարդոց յաջորդներն բաւական համարեցին հիմնադիրը կատարելագործել։ Հայրենի հողին վրայ օրինակներ դտան, ուստի և դուքսերը փնտուելու չեւան։ Բայց երբ Եւրոպայի լուսամբ մարդիկ քաղաքական վերանորոգութեան վրայ խորհելու սկսան, իրենց տոհմային պատմութեան մջ տխրայինք չսեմնելով՝ բնապէս հին ժամանակաց բեկորները ձեռք առին, որոց ուսումն ընդհամայն Եւրոպա դաստիարակութեան մի կարեւոր մասը կ'սեպուի։ Մեր նկատած պատմաբաններն մեծ հասարակութեանց անդամ և բացարձակ վեհապետներու հոյատակ զանուած են։ Այս է պատճառն որ, ինչպէս արդէն ըսինք, մեծ մեծ սխալներ կ'ընեն Հին հասարակապետութեանց վրայ ճշուելու ատեն։ Այժմ իրենց գործերը կ'կարգան ամենուրեք այն ողուի որ գրուած են։ Համաճաման պարագաներու մջնկանուող

մարդիկ կ'կարդան, որ թէ և աղատութեան ճշմարիտ բնութեան անտեղեակ՝ արամադիր կ'երևին անոր նկատմամբ ամէն ըսուած բաներն իբրև լաւ բաներ կարծել: Այս գրեանք ինչ ազդու կերպով ներդրած են այս տեսադէտ վերանորոգիչներու վրայ՝ քաջածանօթ է ամէն անոնց որ նախորդ դարու ֆրանսական դրականութեան ուշադրութիւն ընծայած են: Բայց թերեւ ամենէն աւելի անոնցմէ ներդրած ուղմատենագիրն Ալթորիօ Ալֆիերին եղաւ: Իր մի քանի թատերգութեանց մէջ՝ ի մասնաւորի Ալիդինիայի, Բիմնիէօնի և Երէյն Բրուտոսի մէջ, իր վարպետներուն այլանդակութիւնն անդամ ծաղրող ծեց:

Զարմանալի չէր որ կոյրն, այսօրէս առաջնորդ ունենալով կոյրն՝ դայթ ի դայթ շարժէր: Քրանսայի յեղափոխութեան արարքն՝ ըստ մասին՝ այս դրսւոր դործերու արգիւնքն եղան: Անտարակցա՝ առանց այս դործերուն օժանդակութեան՝ մի յեղափոխութիւն տեղի պիտի ունենար — շատ բարիք և շատ չարիք արտադրող, ահաւոր մի յեղափոխութիւն, բայց կարճատև չարիք մեծ զոհողութեամբ գնուած այլ տեսողական բարիք: Բայց իսկ և իսկ մի այնտիսի յեղափոխութիւն չպիտի լինէր: Անոր ընթացքն ու յարակից պարագաները, ըստ մեծի մասին՝ տարբեր պիտի լինէին: Լեզուի մէջ ընդհատ մեծաբանութիւն, վարմանքի մէջ ընդհատ կեղծիք, ընդհատ հանդիսաւոր անտիք և սնահառ պարզութիւն պիտի լինէր: Օրէնսդիր ժողովներու անօրէնութիւններն և դիւանադէտներու թղթակցութիւնը չպիտի աղարտէին միայն դպրոցական ճամբարտալուծեան արժանի բաջադանօք: Մեծ և բարեկիրթ մի ազգի կառավարութիւնն ինքզինքը ծիծաղելի չպիտի ըներ փորձ փորձելով վերանորոգելու վաղուց անցած դայած մի աշխարհի սովորութիւնները, կամայնալիս աշխարհի որ լոկ դաս մի խօսչական հեղձաններու նկարագրութեան մէջ դոյութիւն ունի:

Աստիք պարզապէս յիմարութիւններ էին: Բայց սոյն մատենագիրներուն ներշնչած ողին աւելի դառն հետեանք բերին: Իբրաի յեղափոխութիւնն արատող ոճիրներու մեծ մասն՝ բարոյց ապականութենէ, ժողովրդային աղիտութենէ, անցեալ բռնակալութեան յիշատակութենէ, օտար աշխարհակալութեան երկխոյզն, զշարադրութենէ, փառասիրութենէ, կուսակցական ողիէ առաջ եկան, այլ սակայն մի շատ վայրենի արարմունք պէտք է անլրէպ վերադրել կրակոտ երևակայութեան, վատթար սկզբունքի, բարոյականի մէջ դուհի երեւցած բաներու ներհակութեան և ամէն փողփողուն և երկբայելի բաներու համար տեսնուած կրից: Այլ, Պըրք այս նիւթին վրայ մեծ լրջմտութեամբ

Թեամբ կ'խօսի . ձերենց հասարակացեալութեան յստաջատու թիւնը , կ'ըսէ , բարոյական ցնորքի վրայ հիմնեալ է : Պատմութեան մէջ զանաւոր տնայնական սպարազաններն՝ ճշմարիտ թէ առասպելական , որ կասկածելի հասարակայն օգուտ ունին , պարագաներ՝ որու առջեւ բարոյականութիւնը կ'շփոթի , բանականութիւնն կ'տատամնի , և որոյցմէ բնութիւնն ահաբեկ կ'ընկրկի , իրենց հատընտիր և գրեթէ միակ օրինակներն են իրենց տղայոց կրթութեան համար : Մենք կարծենք թէ այս չարիքն՝ մեր արգէն յիշած պատմաբաններուն և անոնց արդի հետեւողներուն ներդրութեան պէտք է ուղղակի վերադրել :

Պէտք չարանախօսի :



#### ԱՌԳԱՍՍ

1872ի ապրիլ ամսուն՝ ճամբայ ելաց Ասպէն , որ Տոն գետի վրայ՝ Խաղախներու սիրուն աւան մ'է . մէկ կողմէն գետին մեծ կամրջին վրայ կ'նայի , հարաւային կողմէն ընդարձած դաշտավայրի մը վրայ : Երբ Մոսկուան Թողուցի՝ ձեան և տղի մէջէր . բայց Գաղթօֆէն վար աղուր այլ կարճատեւ ուսական դարնան եղանակ մը գտայ . 'ի Աովկաս գրեթէ ամառ էր : Երկիրը տակաւին Տոնեան Խաղախներու հողին բնիկ կերպուրանը կ'պահէ . ատեն ատեն չքնաղ դիւղ մը , ծառազարդ խոռոչի մը մէջ ցիր ու ցան նետուած՝ ըստ ուսական ոճի . շրջակայ բաղաւայրին մէջ բարձրացող եկեղեցւոյն ոսկեղօծ խաչով՝ կ'ներկայի աչաց բլբալին մ'արտեանին ներքեւ՝ անաղաղոյն այլ օգտակէտ առուակի մը վրայ : Ի վերջէ Տոնի սահմանները կ'վերջանան և Աովկաս կ'մննես , թէ և հողաշէն հիւղէ մ'աւելի խոշոր բան մը չերեիր հեռուն , և Սղաւրոբօլի սպիտակ աշտարակները անսնուէին ետեւ միայն կ'սկսիս հօգիւններէն դանաղանել բլուրները : Զատիկ կիրակին էր երբ այս քաղաքը հասայ , և նորսօցս կանաչագեղ պարտէզներն՝ որոց մէջ շինուած է քաղաքը , շատ գեղեցիկ կ'երևէին՝ Ս . Բեդրսպուրիկ անվերջանալի ձմեռնաւոյն եղանակէն ետեւ : Մինչև Սղաւրոբօլ՝ միայն Տոնի Խաղախներ Ռուս-

սեր և կէս վրանաբնակ Գալմուքներու և սեւամորթ Նոկացիներու խառնածին ժողովուրդ մը տեսայ։ Բայց նոյն վայրէն կ'սկսէր Աովկասն ու Արևելքը, որ այնքան սիրելի են պատկերհաններու և վիպասաններու։ Խաղախներն (Աովկասի գինուորական սահմանի մէջ) իրենց զրեստով լեռնականներուն կ'նմանին, բայց մաքուր ռուսերէն կ'խօսին։ Քուպանէն կամ Պիատիկորսքէն քանի մը լեռնաբնակներ կ'երեւին, որ զանազան դոյներով, թուխ, սպիտակ կամ սև տառատուկ կը հաղնին, իրենց լանջին վրայ կրկնաշար փամփուշտի պահերն ունին, բրդեայ բարձր գդակներով և շողշողուն սակններով ու հրադաններով, նոյնպէս Պարսիկներ և Հայեր կան որ Արևելքի այս կողման բոլոր քաղաքներու մէջ վաճառականութեամբ կ'զբաղին։

Պիատիկորսքի և շրջակայից բնական գեղեցկութեան վրայ շատ բաներ լսեր էի, և այնպէս կ'յուսայի թէ լեռներու խորը շինուած է։ Անձրևոտ օր մը հասնելով միայն կարող եղայ դիտել մշուշին մէջէն երևցող լեռներու ուրուադիծն, բայց հետեւեալ օրն իմ յոյսերս բոլորով վիշ գերեւ ելան։ Պիատիկորսք քանի մ'աննշան բլուրներու մօտ կանգնած է, որոնք գլխովին տափարակ դաշտավայրի մը կեդրոնը կը դնուին, և այս դաշտավայրը դէպ 'ի հաբա ու թսուն վերսթի չափ կ'տարածուի և անոր ծայրը կ'բարձրանայ ձիւնապատ Աովկասի անբեկ ու գեղեցիկ շղթայն — անբեկ, 'ի բաց առեալ այն վայրն ուր Ելպուզ կ'նսեմացնէ մօտաւոր լեռներու պարն իր երկրորեակ ահադին վալթներն բարձրացնելով։

Երկու օր շարունակ այս մեծ պատն աջ կողմէն փոքր առ փոքր կ'ամբ բառնար և աւելի որոշ կ'երևէր, մինչև որ 'ի վերջէ Մոլոտոքէն ճամբան յանկարծ շեղելով և աստիճանի նման լեռնադաշտներն 'ի վեր ելնելով՝ Վլատիկակաս հասաւ, որ ահաւոր և մութ կըմբ մը մուտքը դնուող դաշտի մը մէջ նկարագեղ շինուած է. այս կըմբն վերէն կ'անցնի Վրաստան տանող գինուորական արահետն՝ ռուսական ճարտարապետութեան մէկ հրաշակերտը։ Քանի մ'օր ետքն այս արահետէն անցայ՝ իր բերդանման կայարաններով որ երբեմն կարեւոր էին այս տեղ — նոյնպէս երկուստեք երեցող մշուշապատ կընայ առապարներուն և ձիւնապատ վայրի ամայութենէ, առապարներ ուստի Պրոմէթէոս թերևս կ'ապուած է։ Բայց պահակին կատարէն սննդն էն ետև, ուր արահետը փակուած էր քանի մը կանդուն բարձր ձեռն հալած հիւսերով՝ մինչև Աուտարի փոքրիկ կայանն, և ահադին վիհէն վար իջնելով՝ որու գալտթէն եթէ մէկը քար մը նետէ դէպ 'ի դիմն

որ անոր ստորոտը կ'դռնուի , ժամերու կարօտ է որ վար իջնէ , այն ա՞ն տենն նոր և հիանալի տեսարան մը կ'ներկայի աչաց : Փոխանակ մերկ ժայռերու , ահատեսիլ և ասպառում երևոյթներու , փոխանակ դետի չոր ու կոպտուտ տաշտերու , որ ամէն ինչ թաւալող ձմերային հեղեղներու հետքը կ'ցուցնեն , ուրիշ բան չերևի բայց միայն բոլորաձև ճիւղուն բլուրներ , ամենադաւար ու թարմ անտառներով ծածկուած , կարկաչող յստակ վտակներ , որ այնպէս կ'սահին որպէս թէ անձրեւը չէ կարող վրդովել կամ յորդել իրենց հեղիկ ընթացքը , և Վրացոց նկարագրեղ զիւղեր , թէև աղատու և անշուք : Այս չքնաղ տեսարանէն , իր հին աւերակներով Տուշէդէն , որ անցեալ քաղաքակրթութիւն մը կ'այսնէ , և Մծխիթայէն որ Վրաց թաղաւորներու շիրիմներովը կ'պարծի , ուր կանաչագեղ բլուրները կ'հասնին և հարաւային կողման արեւակէղ , անջրդի սեպած ժայռերն ու հեղեղատները կ'սկսին , վերջապէս Թիֆլիզի բանուկ փողոցները կ'մտնենք , որ մաքուր և պայծառ է ջերմոցի նման կլիմային հրատապ ու չոր օդովը , և մեր ետեւը կ'ընդունք , դէթ քիչ մ'ատենուան համար , ապառաժներն ու վիհներն որ Աովկասու լեռնաքնակ տոհմերու բնակարաններն են :

Արիասիրտ և յանդուգն ժողովուրդ մ'որ Ռուսաց կողմէն Չէրքէզ կ'անուանին և մեզի ծանօթ են իբրեւ Վիրք՝ Գուպանի երկայնքը զանազող երկիրները ժառանգեր էին , որ լեռնակնաց ազդային պաշտօն պանութեան երբեմն մեծ կեդրոններն էին Ռուսիոյ պետութեան դէմ : Մինչդեռ միւս ցեղերն Ռուսաց անձնատուր եղեր էին (ամենէն առաջ՝ դաշտաքնակ Գասպըք , Ռսեդք , և Շամիլին բռնութէն ետք՝ Լէզիք և Չէչէնք) Վրացիք՝ տեսնելով որ անօգուտ է կռիւն աւելի ևս շարունակել՝ յաղթողին իշխանութեան ներքեւ մանելու մերժեցին , և 400,000 հոգի՝ ամենէն աղնուական և լաւագոյն դասէն՝ իրենց սիրական հայրենիքէն ելան , որու համար այնչափ երկար ժամանակ արիւրաբար պատերազմը էին , և նախադաս սեպեցին Թուրքիա դադրել քան թէ խաղաղ կեանք մը վարել Ռուսիոյ կառավարութեան ներքեւ : Աովկասու պատմութեան մէջ այս տարագրութեան դէպքը մեծ արատ կ'ըրէ Ռուսաց : Նոյն իսկ Ռուսաստանի ժողովուրդն աւ հասարակ դատապարտեց այս բռնութիւնն , որով հաշարաւոր մարդիկ՝ ծերունիք , կանայք , մանկտիք , հաւատարմութիւն մերժելով , խաղախներու ձեռք արտաբեցան , և իրենց զիւղերն հրոյ ճարակ եղան : Գաղթողներն մուրալով և աւերելով Թուրքիոյ սահմանադուին հասան թշուառ վիճակի մէջ , իրենց երկիրը թողլով՝ 120,000 ողորմելի հայրենակիցներ

(որ ամէն տարի կ'ստառին) և ահա այժմ ատենք միայն կ'մնան բարբա-  
րիկ ազգերու մէջ ամենէն ընտիր ցեղէն, ցեղ մ'որ հին Բաղարաց պէս,  
այնքան մեծ բարեկրթիչ ազգեցութիւն ունէին Ռուսաստանի հարաւա-  
րին երկիրներու վրայ: Բայց վերջապէս ինչ ընել պէտք է ցեղ մ'որ  
լուծ կրելու կ'գժկամակի: Որչափ ատեն որ ասոնք կ'ովկասու մէջ մնա-  
ցին, Ռուսերը չէին կարող հանդարտ մնալ կամ ապահով լինիլ, և զօ-  
րաւորագունին օրէնքն յաղթանակեց: Այս Վրաց սեղը բռնեցին մա-  
սամբ Բուպանի խաղախներն և մասամբ Ռուս զիւղացի զաղթականներ  
որ սուղ ժամանակի մէջ անգէ մեռան, այն հարուստ և արդաւանդ  
երկիրը գրեթէ անապատ թողլով: Ռուսք՝ կ'ովկասու մէջ իրենց ունե-  
ցած կացութեան բերմամբ այս սրտերազմը մղեցին, վասն զի ստի-  
պուած էին ապահով ճամբայ մը բանալ զէս ի այն դաւառներն որ ի  
վաղուց իրենց լուծն ընդունել էին. բայց այս պատերազմն ուրիշ  
պատրուակ տուին Ռուսք, այնպէս կարծեցնել ուզեցին որպէս թէ  
Վրաց և Թուրքաց մէջ եղած գերաւմաճառութեան վերջտալու փափաք  
ունէին: Այս ժողովրդեան կանայք ծախերն գրեթէ յար և նման էր  
եւրոպական ազգաց ոմանց կնաւճառութեան, այս տարբերութեամբ  
որ աստ կանայք յօժարակամ դերի կ'լինէին: Վրացիք իրենց յարաբերու-  
թիւնը կ'շարունակէին Թուրքիոյ մէջ ունեցած ազգակից կանանց հետ,  
ստէպ անոնց հետ տեսակցելու կ'երթային, և ասոնք իրենց վիճակը  
շատ պատուական կ'դնէին: Սակայն դարձեալ զործողութիւնն գերա-  
ւմաճառութիւնն էր եւրոպական զաղափարներու նայելով. այսպէս  
Ռուսաստան այս առիթը բռնելով Վրացիքը նուաճելու ելաւ: Ձեր-  
քէդաց կրօնն մահմետականութեան և քրիստոնէութեան հետաքրքրա-  
շարժ խառնուրդ մ'էր: Հերպէրսդէյն յունական ծիսի քրիստոնեայք  
կ'անուանէ զանոնք, բայց որովհետեւ կ'ըսէ նաև թէ Հինդուեանք  
(Պիտաիկօրսք) ինչպէս որ նա կ'անուանէ, Սլավեան լիզուն կ'սօսէին՝  
իւր կարծիքը կ'ստիպօք ի է: Հաւանականաբար զանոնք Վրաստանցոց և  
Հայոց հետ շփոթած պիտի լինի, բայց քրիստոնէական պաշտամունք,  
աւերակ եկեղեցիներ և հին լիզուաւ արձանազրութիւններ զանուած  
են անտարակոյս Վրաստանի մէջ: Պիտաիկօրսքի մօտ՝ դեռ ևս կը  
դանտին Սկովտական զաղթականաց մնացորդք, որ անդ զիմեր էին  
Ձերքէդքը քրիստոնէութեան դարձնելու մտօք, բայց որովհետեւ ի-  
րենց ջանքն անարդիւն մնաց, անյաջող միոյժնարներն երկրադործու-  
թեան պարապելու սկսան, և ասոր մէջ աւելի յաջողութիւն գտան:  
Տակաւին իրենց հին սկովտական առուներ կ'սպհեն, և կ'ովկասու մէջ

սկովտական եկեղեցին (kirk) կ'ծաղկի թէև նոր սերունդն իրեն բնիկ լեզուն մոռցած է :

Հաա մը լեռնական ցեղերու մէջ կրօնը նոյն անորոշ կերպարանն ունի : Ոստեպայ մէջ, որոց համար ազդաբանները կ'ըսեն թէ Գերմանացւոց նախնիքն են, ժողովուրդը քրիստոնեայ է, այսինքն եթէ իրօք բան մ'է. իսկ աղնուապետներն մահմէտական են, թերևս Վրաստանացւոց և գաշտաբնականներու հակառակու թեան ոգւով, որ հին ժամանակաց հետէ քրիստոնեայ եղած են :

Առկասու մէջ երկու բան ուղեւորին զարմանք կ'դատաճուէ. դէտա որ շղթային անձկութիւնն և յատկութիւնն որով կարելի է ուղիւ դժուանոր հետեւիլ, քանի որ շաա բարձր արտեաններ ընդ առաջ չձգեր. և իրարու հետ սարերու մօտաւորութիւնն, այնպէս որ լայն հովիտներու կամ ընդարձակ լիճերու համար տեղ չեն թալուր, ինչպէս որ կան ուրիշ լեռներու շարքին մէջ : Լեռներն այնպէս իրարու կից են, որ անոց համայն երկայնութեան մէջ միայն երկու անցք կամ պահակ կը գտնուին այսպէս կոչուելու արժանի. միջևը Տարխար, ուր շղթայն ամենէն աւելի անձուկ է, և Գարբանդայ (պահակն ճորայ) դրունքը, Աստպից ծովուն վրայ, որ իրօք բառին ճիշտ առմամբը՝ պահակ չէ, այլ ճամբայ մը լեռներէ հեռի, որոց շրջանն ընելու համար ծովեզրէն կ'անցնի :

Հիւսիսային արևմտեան կողմն, ուր շղթայն փոքր առ փոքր կ'նուազի Ելլարուզի բարձունքէն մինչև Քուսարնի տենդային մօրատները մէկ կողմէն, և Սև ծովու անտառաւ ափունքը միւս կողմէն՝ կ'ընակին կամ լաւ ևս ըսենք, կ'ընակէին Չերքէզք : Ելլարուզի հարաւային կողմը, բայց միշտ լեռներու մէջ, Սվանէզք (Սուանք) կ'գտնուին՝ զրեթէ անձանթցեղ մը, և աւելի առաջ գնալով՝ Ռիտնի հովիտը կ'հասնինք, ուր Վրացւոց սերունդէ ցեղեր կ'ընակին, և որոցմէ անդին Լազխտանի լեռները կ'բարձրանան Անատոլիոյ մէջ : Գլխաւոր շղթային հիւսիսային կողմը գտնալով Պիատիկորքէն մինչև Վլատիկաւկաս զանազան ցեղեր կ'գտնենք գաշտաբնակ, Վփխազք և Քապարք, ապա Վլատիկաւկասի գիմայը՝ Ոստեգք. և աւելի ներսը՝ Չէչէնայց մեծ աղբը, նախադիւր լեռնականք : Այս տեղ լեռնադաշտը դէպ 'ն հիւսիս կ'տարածուի, և ուռուցիկ բլուրներու լայնարձակ միջոց մը կ'թողու, որոնք Աուրի գաշտին վրայ կ'նային : Այս է Տաղլտան Լեզիեայ և Համիլի բնիկ հողը, և այն թատրն՝ ուր աննկուն ընդդիմութիւն տեսան Ռաւք, այս երկրին վրայ կ'ափաքիմ խօսիլ :

Կատարից ծովուն մօտ՝ Բեղրովքի քաղաքէն՝ այն վայրն ուտի Պետրոս առաջին անգամ տեսաւ լեռներն զոր իր յաջորդները նուաճելու սահմանուած էին, վերստին լեռները մտայ, և այս անգամ միտքս շրջիլ էր այն կայքն որ մինչև 1859ին Ռուսաստանէն անկախ էին։ Կատարից ծովէն քանի մը մղոն հեռու կ'գտնուի Տէմիր-Խան-Շուբա, որ պատերազմին ժամանակ Ռուսաց արտաքին ամրոցն էր, յետին վայրն ուրանօր Շամիլի զօրքէն ապահով ապաստան մը կ'փնտռէին. վասն զի, թէև գիշերայն Ռուս մը չէր իշխեր այս ամրոցէն մղոնի չափ հեռանալ, սակայն քաղաքն Շամիլի բոլոր յարձակումներուն դիմակալեց։

Բարեկամներու շնորհիւ՝ ամէն ինչ որ պէտք ունի գտայ ՚ի Շուբա ուղևորութեան համար, զոր այնուհետև ձիով պիտի ընէի։ Կախ տեսարանը կ'ներկայէր համատարած բլուրներ, դալարաւէտ արօթներ և լայնարձակ դաշտեր, բայց ապա երեւաւ լեռի և անոցոյ զտոխհակ ժայռեր, և մեղէ վեր՝ խորշերու և գոտիներու մէջ հաւող ձեան հատորներ մեղկայանէին որ լեռանց կ'մօտենանք։ Աթէքի, փոքրիկ առաւ (գիւղ) մը որ անձուկ գրից վրայ թառած է, գիրք որոյ վրայ Լէվկիք կ'ախորժին իրենց բնակարանները հաստատել, տեսարանը լիովին փոխուեցաւ, և շքեղ կիրճ մը մասնք որու խորը հեղեղատի մ'անցքն էր, կ'ըր ժայռերէ շինուած, բաւական նկարագրեղ, բայց անոնց վրայ ձիավարելը շատ տաժանելի։ Ձիերն իրենց շաւիղը քաջ գիտէին. երբևէ ոտը միտսին առնելով քարէ կոճղէ մը վաք կ'իջնէին, և ապա ուրիշի մը վրայ կ'ենէին, երբեմն ցատկելով՝ երբ նայէին որ իրենց ներքև քար մը կ'շարժի, խիստ զգաստ կերպով. բայց այս ընթացքով կ'ստիպէին ձիաւորներն որ մերթ իրենց սրշին վրայ, մերթ բաշին վրայ նստին՝ խիստ անվայելուչ գիրք մը բռնելով։ Արեջայէս փառաւոր ամպրոպ մ'որ քանի մը ժամէ ՚ի վեր կ'սպառնար՝ յետևոյս բլուրներու վրայ որտաց։ Տեսնելով որ անձրևը մեզի չպիտի հասնէր՝ կայ առի որ այս տեսիլը վայելեմ, բայց իմ առաջնորդս՝ կէս մը թաթար և կէս մը ռուսական խառն սիրուն ոճով մը քաջապէս շէյ-աֆֆ մակդիրը տուաւ նոյն ճամբուն և զիս ընդ առաջ փութացուց։ Երեք ժամ ձիով քալելէն ետև՝ կրճին ծայրն հասանք՝ երեք կանգնաչափ լայն անցք մ'որ երկուստեք բազմաթիւ ոտք բարձր գահավէժ կողեր ունէր, որու հոնաւոր դաշտին մէջ առուակ մը կ'հոսէր։ Առաջ քշելով՝ Արևելայիլ գիւղը մտանք, մեր իջևանը։ Մի քանի ժամ ետք՝ վերստին դարձայ կրճին մուտքը, և խիղջն հասկըցայ թէ ինչո՞ւ համար իմ առաջնորդս այնքան զարհուրեւ էր։ Արեւը մինչև եղրն գեղնորակ հեղեղով մը լեցուեր

էր՝ շատ ունաչափ խորունկ, և ասոր դէմ ոչ մարդ և ոչ ձի կարող էր վայրկեան մը տուլալ. դիտցաւ նա թէ քանի՜ ահա ուր էին ամսորոպէն յառաջ գալիք հետեանքն, և եթէ ջուրը վրայ հասնէր և մեղ շրջապատէր թերեւս աղատում չալտի գոնէինք:

Աերկէսիլի բարեփրտ ծերուկ Սթարչընան, այս է գիւղին աւագը, իմ գալուստս կանխաւ իմացած լինելով՝ ինձի համար խիստ հաղորատու զիւտ օթեան մը սպառաստել տուեր էր, և քիչ մը կաթ, զոր կարելի չէ ճշգրիտ նկարագրել: Նոյն անգն անցուցի դիշերը, անձրևի տարափը մտիկ ընելով, նոյնպէս ահեղագոյ որոտումն որ մեր գլխուն վերը դանուած հովտին երկայնքը սարէ սար կ'դուար: Տանտէրս լիզուանի դառայ, անոր հետ խօսիլ սկսայ այնպէս որ իմ ուսերէնս թաթարերէնի կ'թարգմանէր սպասաւորս, թարգմանին դիւրութեան համար, և ծերունին որ Աէզիան տարբեր բարբառ մը կ'խօսէր, հազիւ ուրեմն կարող էր անոր թարգմանածը հասկընալ: Սակայն ես՝ արձակ համարձակ հարցոցի թէ Շամիլին ներքեւ ապրիլ կ'սիրէր թէ ոչ Ռուսաց: Ծերունին հարցումն գրամական նկատմամբ դառնելով ըսաւ թէ, ըստ որում իր գիւղն Շամիլի և Ռուսաց մէջ կ'անուէր, և անդուլ լուխնէր ըստ ասպարէզը դարձեր էր, զեղեցիկ օրինակ մը չէր կրնար ընծայել այն, քանի որ անշքայեր էր: «Շամիլ» շարունակեց նա «գերիին վըրայ գանուած դրամին կամ Ռուսերէն առնուած փրկանքին մէկ հինգերորդը կ'վճարէր, և մնացածը ծախուց համար կ'ալահէր. արդ՝ Ռուսերն ինձ 120 ռուպլի կ'տան տարին»: Այնպէս կ'թուէր ըսել թէ այժմ՝ ծերանալովս՝ այնչափ պէտք չունէր Շամիլին: Հետեւեալ օրն իր ամենէն շողշողուն վէնքով վարդարուեցաւ, նոյնպէս վարդարելով իր երեք որդիքը, և մեզի հետ ճաճբայ ելաւ: Գիւղէն մեկնելու ատեն՝ խումբ մը բեռնակիր կենդանիներու հանդիպեցանք, կէս մը դրասաներ կէս մը կիներ էին, և վաճառք կ'կրէին: Նոյն պահուն իմ առաջնորդս սկսաւ ժամանակիս նեղութեան վրայ ողբալ, յայտնեց թէ ինչպէս կին մը քսանհինգ, և դրաստ մը տասնհինգ ռուբլի կ'արժէր, թէ և կան ըսաւ բարեբաստիկ դիւղեր՝ ուր լծակից մը տաս ռուբլիով կարելի էր դնել: Մահէտական կրօնին աղբեցութիւնը Աէզիաց մէջ առ կանայս յարգանքը ջնջեց մինչդեռ նոյնը Չէրքէղաց մէջ կ'գանուէր, և կանանին անդուլ կ'աշխատին գաշտերու մէջ, և տան մէջ կ'վատախին որպէս զի իրենց տէրերն աշխատութեամբ չնուստանան և կարող լինին հազուիլ շքուիլ և ձի հեծնել:

Անցանք Վազի—Քուսուկ Գոյուն—Սույուէն (Տաղտանի չորս դե-

տենն որ Սուլաքը կ'յօրինեն՝ բոլորն ալ Գօյունս Սուլու կ'կոչուին) և զարկինք զէպ 'ի Գարա-Գօյուն Սուլուի հովիտն, և այս աւածականն անխափր բոլոր գետերուն կրնար յարմարիլ էրբ ես անդ էի: Այս պատուական արահետը նոյն իսկ Լեզկայ ձեռօք շինուած էր, բայց Տաղըստանի մէջ ճամբաներն ու կամուրջներն ընդ հանրապէս պատուական են, Շամիլի ճամբան, որ պարզապէս այժի-ճամբայ մ'է, զեւտին միւս եղբը կ'ընթանայ: Նա քաջ զիտէր թէ քաղաքականութիւնը կ'պահանջէր որ իր ճամբաները կարելի եղածին չափ նախնական վիճակին մէջ թողու, քանի որ իր տըրուձին ամենուրեք կարող էր քայլել: Նոյնպէս Ռուսք ասոր հակառակը գործելու ճիղ թափեր են. Ռուսաստանի մէջ Տաղըստանի ճամբաները լաւագոյններն են, և ռուսական թնդանօթածիլ զօրքն ամենայն զիւրով եւամբ մէկ ծայրէն միւս ծայրը կարող է երթալ — հիանալի յառաջադիմութիւն մ'է այս, երբ նկատենք ճարտարապետական դժուարութիւններն, հողին զիւրքն, և մերիկներն որ սաէպ հարկւրաւոր կանկուն երկայն ճամբաներ իսկոյն կ'աւլեն և վարի անդունդը կ'դահալիմեն . . . :

Կամուրջները կրնան շատ օգտակար լինիլ, բայց երբ երկաթէ շինուած և փայլուն կարմիր դունով ներկուած են մեր բոլորաքն եղող զաշտանկարի մը գեղեցկութեան վայլ չեն աւելցնիր: Այժմ լեռներն շիտակ զետին կ'յանդին որ՝ նոր անձրևներէ ռուսով խլացուցիլ բռն բիւնով անձուկ վիհերու մէջ կ'դահալիմեն, որ յետևոյ կ'տարածուէին հարկւրաւոր կանգուն հեռի, երկուստեք լայն արձակ զաշտ մը թողլով: Ի վերջէ՝ գետէն անդին՝ Շամիլի յետին ապաւէն յերևան եկաւ, այս է Քունիպ, որ մինչև առնուիլն անառիկ կ'համարուէր. այլանդակ ձևով լեռ մ'է այս, լիովին մեղացած լեռնադաշտ մ'որ զրեթէ 5,000 ոտք կ'բարձրանայ վարի հովտէն շրջանակի, տասներկու մղոնի չափ բոլորակ ունի և ուղղահայեաց կ'ձգի ամէն կողմէն: Այս է այն հռչակաւոր բերդը: Երբ գետէն անցանք և զինուորական ճամբուն օձաձև պտոյտներն սկսանք, բարձրութիւնն մեծ բան մը չէր երևեր. միայն երբ հասնելով ռուսական զիւրն որ ճամբուն երկու երրորդ մասով վեր է, տեսայ՝ ինչպէս որ կ'երևէր՝ վերև դանուած ճամբուն անվերջ շրջաններն, և որոսաձայն զետն իմ ոտիցս ներքև պարզապէս իբր անշշուկ առու մը, այն ատեն տեղւոյն ահալին ընդարձակութիւնն իմ աչքին սրտընցաւ:

Պիպի շարանանի 3

ԿՐԹՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՅՈՑ ՄԷՔ

Բ

Մեր դպրոցներու բոլոր նիւթական, բարոյական և մտաւորական հանգամանաց վրայ հատորներ կրնան դրուիլ: Այսպիսի դործի մը ձեռնարկելու համար ոչ հեղինակութիւն ունիմ և ոչ հմտութիւն: Հետեւապէս պիտի ուրուագրեմ միայն իմ գիտողութեանց և քննութեանց արդիւնքը՝ ձեռնհաս անձերու թողլով այս ամենակարեւոր խնդրոյն վրայ հիմնովին գեղելու ծանր և օգտաշատ պաշտօնը: Բայց դարձեալ խնդիրն այնքան նկատողութեան բաղմադիմի կէտեր ունի որ բոլորն ալ իրարու հետ չշփոթելու համար կարգ մը պահել պէտք է: Արդ՝ չորս զլխաւոր մասի պիտի բաժնեմ՝ զրուածիս նիւթը, այս է եկեղեցի, դպրոց, աշակերտ և վարձատր:

Եկեղեցի. Հայք առ հասարակ սովոր են դպրոցն եկեղեցւոյն մօտ չի նեղ, մին միւսէն չզատելով թէ նիւթապէս և թէ բարոյապէս: Այս իմաստուն և հեռատես տնօրէնութիւն մ'է, մեր նախահայրց կողմէ մնացած ընտիր սովորութիւն մը. բայց այս սովորութիւնն որչափ որ զրեթէ ամենուրեք կ'շարունակուի, անոր բուն նշանակութիւնն մոռցուած է կամ անտես կ'առնուի: Մեր նախնին ուսուցիչներն վարդապետներ և հայրապետներ եղան, որ եկեղեցին դպրոցէն չէին դատեր: մին միւսով կ'սնանէր, դպրատունն եկեղեցւոյ համար պատուական պաշտօնեաներ կ'պատրաստէր, եկեղեցին և եկեղեցականն նիւթական և հոգևոր սնունդ կ'ջամբէր հայ մանկւոյն: Այս պիտի լինէր բնապէս ժողովրդեան մ'ուղղութիւնն երբ ատեն մ'իր հոգին, իր Խակաւտադիրն կերպով մը հայրապետաց ձեռքն էին: որք ստեպ իրենց հոգեշահ խրատն՝ առաքինութեան, հայրենասիրութեան, խաղաղասիրութեան և անձնազոհութեան սքանչելի օրինակներով կ'զօրացնէին: Բայց միթէ կրօնական շարժառիթն, դաստիարակութեան պէտքն էր միայն որ դպրատունն եկեղեցւոյ մօտ շինելու կ'գրգրէր. խառնութեան և բռնակալութեան և պատերազմի ատեն եկեղեցին միայն սրբաւայր մը էր ուր տառապեալ հայն ապաստան կ'փնտռէր, ապաստան զոր շրջակայ բարբարոս ժողովուրդներն անգամ ստէպ կ'յարդէին: Այս սրբա-

Պայրին հովանւոյն ներքեւ պարտ էր նախատեսութեամբ դնել գարա-  
տունն որ նուիրական կերպարան մը ստանայ . արտաքին յարձակում-  
ներու ենթակայ չգտնուի ազգային բարոյականութեան , յուսոյ և ա-  
պագային այս աւանդատունը :

Ինչպէս Ռամկօրէն կ'ըսեն , մինչդեռ եկեղեցին կ'շինէր դպրոցը ,  
դպրոցն ալ եկեղեցին կ'շինէր . ինչ որ կ'մտնէր եկեղեցւոյ զանաւանակն  
դպրատան համար օգուտ ունէր : Տակաւին այսպէս շատ տեղ՝ եկեղե-  
ցին ոչ միայն դահեակ այլև զատարակ է դպրատան , այս երկու  
բառերը դրեթէ համանուն էին . հայ եկեղեցին հայ դպրոց կ'ենթա-  
դրէր , մին մայր միւսը դաւակն էր : Բայց ժամանակ անցնելով՝ եկեղե-  
ցին ոչ միայն մոռցաւ իր հօտն , այլև հօտն իր եկեղեցին մոռցաւ և  
ազգային այս երկու կենսատու հիմնարկութեանց մէջ զգալի հերձուած  
մը մտաւ : Ո՞վ եղաւ այս հերձուածին բնապատճառը . եկեղեցականն ,  
որ երկնային պատգամին հետևելու տեղ , աշխարհային պատգամնե-  
րու անսաց , որ ճշմարտապէս գիտութեան և լուսաւորութեան կուսա-  
կից և հաղորդ գտնուելու տեղ , տղիտութեան քարոզ և կենդանի տի-  
պար մ'եղաւ : Ուստի ժողովուրդն իր հոգեւոր հովուին վրայ չտեսաւ  
այն ջահն որով սովոր էր առաջնորդիլ և այլուր լոյս և յառաջագիմու-  
թեան տարերք մնտուեց : Նոյն իսկ եկեղեցականին պատկան պաշտօնն  
շատ պարագաներու մէջ ինք ստանձնեց և Բրիտտոսի բանին հետ՝ եկե-  
ղեցւոյ իրաւունքն ու սահմանքը քարոզելու և պաշտպանելու ելաւ :  
Այս հերձուածը՝ թէև աղէտալի մեր ազգին նկատմամբ , լուսոյ և  
խաւարի մէջ ժամանակիս բերած մէկ յեղափոխութիւնն էր որու ան-  
մտադիր գտնուելով առ հասարակ մեր կրօնական դասն , միջնադարեան  
դաղափարներու սպասարորութիւնը շարունակեց : Ինչ եղաւ ասոր հե-  
տեանքը . թէև մեր դպրոցներն տակաւին եկեղեցեաց մօտ կ'շինուին ,  
թէև եկեղեցականն միշտ իր նուիրական անուամբը կ'յիշուի , թէև ե-  
կեղեցւոյ ժամկոչը կամ զանգակն ժողովուրդն եկեղեցին կ'կոչէ , բայց  
դպրոցը բարոյապէս եկեղեցականին իշխանութենէ ելած է , բայց քա-  
հանայն պարտ ու պատշաճ վստահութիւն և պատկառանք չազգեր ,  
բայց ժողովուրդն առանց ջերմեւանդութեան եկեղեցի կ'մտնէ : Ուրեմն  
մինչև որ եկեղեցին իր մթութիւնը չփարատէ , մինչև որ եկեղեցականն  
իր կոչման վստահութիւնը ճանչելով չգործէ , ոչ ազգին վրայ՝ որ օր ըստ  
օրէ նոր լուսաւորութեան աչքը կ'բանայ , և ոչ դպրոցներու վրայ , որ  
կ'նկրտի չին կապերը քակել , ներդրածութիւն չսխտի ունենայ :

Տառաջագիմութիւնը կ'պատժէ անձայն զինքն անդիւրողներն և

կանգունէ լոկ հնութեան, սովորութեան և նախադաշարման յայտա-  
բար փառացի տիտղոսներ: Եւ արդարեւ՝ եթէ հին ազնուականն մի մի-  
այն իր ակնուականութեամբը, մեծատունն՝ մի միայն իր ոսկիովը,  
կրօնականն՝ մի միայն իր վեղարովը զօրէին մարդկային ընկերութեան  
ակնածութեան, երախտագիտութեան և պաշտաման վրայ իրաւունք  
մը պահանջել, այն ատեն՝ հանճար, գիտութիւն, հայրենասիրու-  
թիւն, կրօնասիրութիւն ունայն անուններ պիտի դառնային և պիտի  
գահավիժէին այն անդունդն ուսկից հանելու համար ոչ միայն խելք,  
ճարտարութիւն և գանձեր, այլ և արեան հեղեղներ թափուած են:  
Ինչպէս նոր օրէնք մ'աստուածային դրոշմով պատկառելի ընելու ժա-  
մանակներն անցան, նոյնպէս անցան ուսումն լոկ եկեղեցւոյ շուքին  
ներքեւ փափաքելի ընելու դարը: Ուսման օգուտն ինքնին կ'սօսի այժմ  
հայ ընկերութեան մեծագոյն մասին, և եկեղեցւոյ զանձանակն և եկե-  
ղեցականին յորդորն ամենուրեք կարեոր չեն դարձնները նիւթապէս և  
բարոյապէս կանգուն պահելու համար: Ժողովուրդն՝ ըստ կարողու-  
թեան՝ ինքնայորդոր կ'մատակարարէ, կ'հայթայթէ կրթութեան հար-  
կը, բաւական է որ համոզուի թէ այդ հարկն առաջագրեալն ապաստակին  
պիտի ծառայէ:

Բայց մի թէ այս ըսելով միտքս հոգեոր իշխանութեան անկարեւ-  
որութիւնն ակնարկել է. ոչ, ուր որ մարդիկ կան, կրօնն ալ անհրա-  
ժեշտ է, ինչ գոյն որ ունենայ այդ կրօնը, և կրօնականն իր յատուկ  
նուիրական շրջանն ունի ուր կարող է հրահանգել ժողովուրդն և անոր  
բարոյական զարգացման հօգ տանիլ: Սակայն կրօն մ'երբ պարզապէս՝  
մեր Սահմանադրութեան պէս՝ չոր ու յամաք բառական մեկնութիւն  
կ'դառնայ, երբ՝ փոխանակ հոգի և միտք կենդանացընելու, զանոնք կը  
սեղմէ, կ'բթացընէ, կ'կուրցընէ, այդ կրօնն ըստ ինքեան մեռած կրօն  
մ'է, և միայն դիակներու վրայ կ'ներդրծէ: Ինչ որ երկնային է կրօ-  
նի մը մէջ պահելով, մարդկային հեղինակութեամբ շինուածները նո-  
րոգելն և ժամանակիս հոգւոյն համեմատ տնօրինելն, յառաջադիմու-  
թեան ընդունակ ժողովրդեան մը հոգւոյ և մտաց պահանջումներուն  
համեմատ վարուիլ և անոր վրայ բարոյական իշխանութիւն մ'անվթար  
պահպանելու միակ եղանակն է: Այս ճշմարտութեան շատ կորուստ-  
ներ ընելէն ետեւ պիտի համոզուի մեր հոգեւորական դասը և արդէն ա-  
ռաջին մէկ մեծ կորուստն է ազգային դաստիարակութեան մէջ իրեն  
մնացած խիստ աննշան մէկ գերը:

Ուրեմն հայ կղերն իր արդի դրութեամբը, դրութիւն որ 'է վաղուց

գատապարտեալ աստուածաբանութեան կ'նայի, ոչ միայն ներկայ այլև  
ապագայ սերունդը ձեռքէ կ'հանէ և իր պաշտօնէն կ'հրաժարի ան-  
դէտս: Շատ զիտուն մարդիկ ըսին և նորեքն ալանդադար կ'կրկնեն որ  
ժողովրդեան վրայ տիրելու համար պէտք է մանկուոյն դաստիարա-  
կութեան և կրթութեան վրայ տիրել: Բռն և այս պէտքը կ'ըզան մեր  
հոգեւորականներն, սակայն ժամանակներն իրարու կ'շփոթեն, միջոց-  
ներու ընտրութեան մասին կ'վրիպին և ետև կ'նային քան թէ առաջ:  
Երբ Գրաւարայի կղերն՝ կրթութեան ամէն նորահաստատ օրինաց առջև՝  
աղմուկ և փոթորիկ կ'հանէ՝ կ'ըմբռնեմ իր վրդովման պատճառը, կը  
հասկնամ որ իբրև Սէլադուի հաւատարիմ աշակերտ՝ պիտի ամէն  
ջան, հնար, ներուժ ինն գործէ որ մանկուոյն կրթութիւնն ըստ ա-  
ռաջնոյն իր լծին ներքև պահէ և հետեւապէս Գրաւարայի իր ափին մէջ,  
սակայն չեմ կրնար ըմբռնել մեր դաս մը հոգեւորականաց ընթացքն՝ երբ  
Հայաստանեայց եկեղեցւոյ ազատ սահմանքը կ'մոռնայ, օտարոտի և  
մթին սկզբանց կ'աշտկերտի, և ապա կ'պահանջէ որ հայքը վարելու  
իրաւունքը միայն իրեն մնայ: Պապական դուրծիւնը միապետական է.  
մերինն զուտ սահմանադրական, հետեւապէս եկեղեցական մարմինն ժո-  
ղովրդէն դուրս անկախ մարմին մ'որ կամենայ կազմել, իսկոյն իր էու-  
թիւնը կ'լուսնայ: Իր էութեան պայմանն է ոչ միայն ժողովրդեան ան-  
բաժան մնալ, անոր աղէտից և ուրախութեանց մասնակից դառնալ, ա-  
նոր պիտոյից տեղեակ և յառաջադիմութեան հաղորդ լինիլ, այլև լուս-  
ման առաջնորդ կանգնիլ: Ընդհանրապէս այսօր հայ եկեղեցականն՝  
կրօնն անդամ հայ մանկուոյն ուսցընելու վիճակին մէջ չգտնուիր,  
թեղ այլ զիտութիւնները, և եթէ ուսցընէ իսկ մեծ խորութիւն կ'ե-  
րևի իւրաքանչիւրին աւանդած կրօնական դաւանութեան և սկզբանց  
մէջ, ինչպէս որ կ'վկայեն կրօնական դասադիրք և ատեն ատեն եկեղե-  
ցականաց կողմէ հրատարակեալ յօդուածները լրացիրներու միջոցաւ:  
Շատ դպրոցներու մէջ քրիստոնէական վարդապետութեան դասատու-  
ներն իսկ աշխարհականներ են, ամէն օր, ամէն ամիս դաւառներէն  
դասատուներ կ'ինդրուին, այն պատճառաւ որ կրօնականներն անկա-  
րող են ժողովրդեան ուսումնասիրական փափաքը դո՛ւ ընել: Եւ սակայն  
դէթ դաւառներու մէջ եկեղեցւոյ պաշտօնէին կ'պատկանի իր հօտին  
մանկունն ժողովել, անոր ուսման ճաշակը հայթայթել, բարոյական  
դասեր աւանդել, աղղային պատմութեան, աշխարհադրութեան,  
ժուաբանութեան, բնական գիտութեան, երկրագործութեան և  
այլն ինչն տարերքն ուսցընել: Քանի՜ հատ վարդապետ կ'գտնեց

որ այս հրահանգները զօրէ քամբել արտաքին, որ իր հոգեւոր հոգուն կամ քահանային ձեռնադրութենէ անդիս՝ հեռուէն վարժապետներ կ'փնտռէ որ կրթուի :

Գաւառացին մի շատ վաճառք ունի, որ կրթութեան մէջ մի վիճակային կեդրոններ լինելու սահմանուած են իրաւ, այլ այժմ մեծաւ ճշտամբ ամայի, թափուր, կամ խռովութեան ու մոլութեան որջեր գործած են : Այս վանօրէք պիտի լինէին ժողովրդեան ուսումնասեղիք, մինչդեռ այժմ միայն կրքոտ, կեղեքիչ, ընչասէր, անգութ վանականաց պատապարաններն են : Եթէ լաւ մը քննենք մեր վանական և տառաջնորդական մի շատ կոխներ պիտի տեսնենք որ զլիարար պատճառն անգործութենէ և ասոր յարակից ամէն մեղք թիւնները : Վանական ըստ ինքեան հարգելի մ'է հայու ընկերային կենաց մէջ, եստէպէս յափշտակիչ մարդկան մը, որ ամենց փոխադարձ ծառայութիւն մը մատուցանելու ազդին (վասն զի քանի մ'աղօթք ծամծմել ըստ իս ծառայութիւն մը չէ) ասոր զօրքը կ'վայելէ, միշտ կ'պահանջէ և եթէ չտաս կ'շորթէ : Հազուադիւր բացառութիւններ են անոնք որ ոչ միայն վաճառք կ'ընեն և կ'պահանջեն, այլև ժողովրդեան հոգին աւելորդ փութելու ըստ իս՝ վանական կեանքն ժամանակաւորական վերապահ մ'է այս դարու մէջ, բայց եթէ հարկ է որ դեռ ևս մնան այս հաստատութիւնները, դո՛ւք պէտք է որ կարելի եղածին չափ ազդին օգտակար դառնալու տարիսուն, և անոր կոնակը բեռ և դաւադրութիւններու գործեր լինելէն դադրին :

Այս նպատակին հասնելու համար կարուկ ճամբայ մը կայ : Եւեթք է նախ օրքել վաճառք, գուրս հանել, լուծել անօրոտ, աղէտ և ծոյլ անդամները, հետզհետէ նոր, պիտանի և փոքր 'ի շատէ ուսեալ անդամներ ընդունիլ, այնպէս որ կարող լինին կրթութեան դործին ձեռնադրութենէ : Պատրիարքական հրաման մը, և ժողովրդեան կամքը բաւական են այս վերանորոգութիւնն 'ի կատար հանելու : Թէև փոքր ինչ յանդուգն, այս անօրէնութեան հետեանքն արդիւնաւից են : Վանական դանդաղութեան և ծուլութեան վարը կ'անցնի, վատթար յօժարութիւններ կ'վերնան, և աղղաշէն դործ մը կ'սկսի : Քիչ ատենէն դաւառայիք իրենց բոլորտիքն ուսումնասէր մշակներ և հովիւներ պիտի տեսնեն, և չէ թէ վայրենի էակներ, ինչպէս են այժմ աղային տառապանաց անկարելի ինքնատէրներ : Ժողովրդեան նոր վարժապետը միանգամայն ճամբիտ ուսուցիչ պիտի լինի : ոչ միայն մարդեր, թշուարութեան տոկացող, վտանգի առջև անվահեր, արիասիրտ հա-

յեր պիտի պատրաստե՞ , այլև ինքն ալ պիտի կրթուի և ազգային կենաց մէջ պիտի ապրի : Ուսուցիչն ամէն օր մանկանց հետ տեսնուելով , անոնց բարոյական զարգացման հոգ տանելով , բնապէս անոնց յարգն ու սէրը պիտի դրաւէ , իր սիրան համբերութեան , բարեսիրտութեան և կարեկցութեան պիտի բանայ , ներողամտութեան պիտի վարժի , և իր հովուական պաշտօնն ալ այս հոգւոյ տրամադրութեան համեմատ պիտի վարէ : Ի բաց առեալ քահանաներն՝ որ առելի հայրական գործէ կը տածեն՝ ըստ որում ընտանեկան շրջանի մէջ կ'ապրին , սովորաբար եպիսկոպոս և վարդապետ իրենց առանձնացեալ դիրքով՝ ետականութեան և անցթութեան առելի հակամէտ և մարդկային ամենէն քաղցր զգայումներուն անհաղորդ են : Ուստի ասոնք ազգային կրթութեան գործին եթէ պարապին , մէկ կողմէ մարդասիրական դադափարներ իրենց մէջ պիտի ծաղկին , միւսն արդիւնաւէտ սնունդ պիտի դնէ , միւս կողմէ՝ անօրէն փառասիրութեան մը յարուցած մէքներն ու զժառութիւնները , որ վիճակներու շրջանաւոր հիւանդութիւններն են և Պատրիարքարանի այնքան տաղնապ կ'պատճառեն , եթէ ոչ ՚ի սպառ , մեծաւ մասամբ պիտի դադրին : Այս կրթական ազդեցութեան մէջ կը կայանար՝ հին ատեն՝ եկեղեցականին պաշտօնը , և այս պէտք է որ լինի մանաւանդ այժմ որ դաւառները դասատուներու սով կայ , և քանի որ ժողովուրդը յիւր ու ցան է , ու իր բարօրութեան և փութանութեան հիմունքն ուսման և կրթութեան մէջ կ'փնտռէ :

Ահա այս ուղղութեամբ թէ կրօնականն և թէ աշխարհականը կը շահին . այն՝ իր նախորդ պատկառելի դիրքը կ'ստանայ , այս՝ իր բարոյական լոյսն , որ ազդին համար անմիջական , միակ փափաքելի բարիքն է , իբրև միութեան , դիտութեան և նիւթական զօրութեան հիմ : Ահա այն ատեն դարձն իրօք եկեղեցւոյն քահանային կ'ընկնի և եկեղեցին ոչ միայն երկնային այլ երկրային փրկութեան պատուար մ'որու դէմ պիտի փշրուին մեր ազգային հիմնարկութիւնները շրջապատող բազմադիմի օտար թշնամիներու արձակած ուռմբերը . . . :

ԱՄԵՆԱՊԱՏՈՒ Ս. ՊԱՏՐԻԱՐԻՆ ՄԷՆ ՆԱԾԱԿԸ

. . . Խմբագիր ,

Այս լրագրին՝ ազգային Ընդհանուր ժողովը կոխելով ցրուելու համար ղեկավարողը քանիցս զրկուելուն վրայ , ցաւօք սրտի և դրեթէ ախմայ՝ Բ. Դուռը զիր դանդաճանաց զրեւ պարտաւորեցաւ Ազգային վարչութիւնը :

Ի սկզբանէ անտի՝ իմանձիս դէմ եղած հրատարակութեանց նկատմամբ անոխակալէի , և դարձեալ այսօր նոյնն եմ . սակայն Ազգ. վարչութեան և Ազգ. Ընդհ. ժողովոյ դէմ անարդանք՝ աննեբելի են : Եթէ ղեկողն ցրուել գիւրին ալ լինի , սակայն վերստին կանգնելն ամենադժուար է , և զուցէ անկարելի . . . .

Իմ մասնաւոր կարծիքս էր՝ լրագրաց համանդամայն յայտարարել , որ հին և նոր ազգային պաշտօնակալաց դէմ անարդար և անպայել կերպով չխօսին :

Խիստ շատ անգամ ցաւ յայտնած եմ ժողովոյ մէջ , և այս անգամահա հա հրապարակաւ կը խօսիմ , թէ խիստ դառն և անտանելի է ինձ համար լսել մեր նախորդ Ամեն. Խորիմեան սրբազանի վրայօք անհամ , կծու և պախարակիչ խօսքեր : Խորիմեան սրբազան՝ իւր վարուքն , բարութ և հմտութեամբ արժանաւորագոյն եկեղեցական մէջ : Ես և նա՝ միայն մէկ կէտի մէջ յանցաւոր ենք , այսինքն Պատրիարքութիւնն ընդունելու մէջ . . . .

Խորիմեան սրբազանն իւր ազգային հասոյթներն վատնած , և իւր հաճոյս իւր շուայլած : Քաղաքական ժողովոյ վսեմ. Ատենապետ Պէյն ալ ինձ համամիտ է այս մասին , թէ նախորդ Ս. Պատրիարքի ամսականներն իւր դահակալութեան օրէն սկսեալ՝ պէտք է 10,000 դրուշ հաշուել , և այսպէս կնքել նորահաշիւն . քանզի Խորիմեան սրբազան փորձառու չլինելուն համար՝ 5,000 դրուշով խոստացեր է ի սկզբան անդ ընել զայն , զոր անկարելի է և 10,000 դրուշով ի գլուխ հանել պատշաճապէս :

Նմանապէս խիստ մեծ ցաւ կ'ըզգամ երբ կը տեսնեմ որ իւր հանձարովն և ազգասիրութեամբ ազգիս պարծանքներէն մին արժանապէս

համարուող վանքի Գրիգոր էֆէնտի Օտեան, և իւր արժանաւոր աշակերտներովն անկէ ոչնուազ նշանաւոր Տիգրան էֆէնտի Եռասփեան՝ չարաչար կը զրոյսարտուին և կը բամբաստին ։

Միւս կողմանէ ինձ կ'ըսեն, թէ այս ինչ անձը Գաղ ժողովոյ, և այն ինչ անձը Կրօն ժողովոյ մէջ պէտք չէ բաղմին ։ Ար պատասխանեմ, թէ Սահմանադրական Պատրիարք մը՝ ժողովական մ'արտաքսելու իրաւունք չունի ։ Ի՞նչ կան դատախազներ, կարող են դիմել ժողովոց՝ օրինաւոր բողոքողի ի ձեռին ։

Խղճիս վրայ բեռ մ'ենթա՞ծ էին այն օտակալի հայհոյութիւններն՝ որ ի կրից կ'ժայթքին, և որ իմ՝ ամենեցուն հաւանութեամբ ընտրուելու առթիւ պէտք էին շիջանիլ, բայց և այնպէս տակաւին չմարեցան ։ Քանիցս եկեղեցեաց բեմերէն աղաղակեցի որ եթէ այս ընթացքը տեւէ՝ ես չպիտի կրնամ շարունակել զայս պաշտօնը, նոյնը կը կրկնեմ և այսօր հրապարակաւ ։

Ողջունելով զձեզ մնամ աղօթարար

1874 հոկտ. 20

Գ. Կ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ

ի Պատրիարքարանի Հայոց ։

Աւատիկ Գառնի ուղղեալ պատրիարքական նամակ մ'որ մեր առջև բաւական մեծ նշանակութիւն ունի ։ Ոչ միայն թէ և ուշկեկ՝ խղճի խոստովանութիւն մ'է, որ Ամեն. Ս. Պատրիարքին պատիւ կ'ըրէ, այլ քաղաքականութեան գործ մ'է որ սոյն խոստովանութեան արժէքը փոքր ինչ կ'նուազեցնէ ։

Քանի մը տարիէ ՚ի վեր՝ կուսակցութիւն մը Խրիմեանի թէ հասարակային և թէ առանձին կեանքը մատը փաթեմ՝ անդուռն բերնով կը ջնանար աղարտել, և դեռ ևս իր ռեսկալութիւնը կ'շարունակէ, կ'ջանար անտես առնել անոր մեծահոգի բնաւորութիւնը, ուրանալ անոր արժանիքը, ձերժել զանի ժողովներէ, և ասելութիւնն այն աստիճանի հասցնել որ մինչև անդամ զանի մայրաքաղաքէն արտաքսել, և՛ եթէ հնար լինէր, կարգէն լուծել տալու միջոցները մտածել ։ Եւ այս ծայրայեղութեամբն իսկ անհեթեթ վրիժու պատրուակներն էին՝ մերթ վարչային անօրէնութիւններ զոր Խրիմեան իր պատրիարքութեան օրով ինքն-իշխանաբար ըրած լինէր, մերթ այս ինչ կամ այն ինչ հանդանակութեան խնդիրն որով Խրիմեան անբաւ դուստրներ զրպանը զրած լինէր, մերթ ամուսկանի խնդիրն որով Խրիմեան աղղային կեդրոնական արկիւն բիւրաւոր ոսկիներ պարտական մնացած լինէր, մերթ այս ինչ

քարոզն որով Խրիմեան Սահմանադրութեան դէմ խօսած լինէր, և այլն: Խրիմեան անոնելով որ իր լուծեանէ կ'ըրբանայ թշնամին և միամիտը կ'պալթակի չեաղհատէ քանի մը յօդուածներ կ'հաստատակէ հանգարտ, անսխալալ, սրտաշարժ ոճով և եղած ամբաստանութիւններն ու կատկածները կ'հերքէ կ'ջրէ, 'ի բայց թողլով այն աղանդութիւններն որոց մէջ կ'թաւալէին իր հակառակորդները: Սակայն ազգային վարչութեան օգնութեան դիր մը, անարկ մը չէր անոններ անկեալ մտորն, որ ընդունայն դատաստան կ'ինդրէր: Նա մանաւանդ՝ ազգային պատրիարքարանի բռնած զրեթէ աննպաստ գիրքէն սիրտ առնելով՝ քանի մը թերթեր Խրիմեանի միտը շարունակ կ'ծամէին և առիթ չէին փախցնէր անոր դէմ քար մը նետելու, չարածոյն սլաքներ արձակելու նաև այն անձերու դէմ որոց հայրենասիրական դործերն ու մեծ տաղանդն ու բանալն արեն ուրանալէ: Լճա, կուրութիւնն այս աստիճանին հասեր էր, և Մաթթա չափով և Թաթթան հակառակորդը կ'ծելով կ'պաշտպանէին զԽրիմեան. միայն թերթ մ'որ Ասիա կ'կոչուի, կը խիղախէր անվահեր, բուռն հարուածներ տալով հակախրիմեան դուրմարտակին: Սակայն մարտն անհաւասար էր, հաաարակութեան առջև յաղթութիւնն անորոշ կ'մնար և մեծ հեղինակութիւն մը, դատաւորի ձայն մը պէտք էր որ վճիռն արձակէր: Ահա եկաւ այդ վճիռը. Ս. Պատրիարքը վերջապէս դատաւոր կ'կանգնի և 'ի նուոտ Խրիմեանի կը խօսի, սաստիկ դսրովելով հակախրիմեան դուրմարտակին անիրաւ, սովորալի լեզուն ու արարքը:

Ս. Պատրիարքը կ'խոստովանի որ Խրիմեան արժանաւորագոյն եկեղեցականներէն մին է, և իր խօսքին կ'հաւտանք, վասն զի նա նոր ճանչիւր զԽրիմեանն և մեծ հողիններն զիրար գնհատել զիտեն, կ'յայտարարէ նաև թէ Խրիմեան բնաւ ստակ խորած չէ և թէ ամսական պէտքէ 40,000 զրուշհաշուել, խնչպէս որ Ասեմապետ պէյն ալ իրեն համամիտ է եղեր, որմէ կ'հասկըցուի թէ ոմանք ժողովականք հակամիտ են: Բայց Ամեն. Ս. Պատրիարքն՝ որ խաղաղութիւն կ'սիրէ և քաջ զիտէ թէ իր խօսքը կ'ներդործէ, ընդէր այս նամակաձև յայտարարութիւնն ուշաջույց, որով կարող էր 'ի վաղուց արմատեն խլել չարիքն ու դաշմանիկալ սիրտերն անդորրել: Չկրնար առակուիլ որ Պատրիարք մ'իր արժանապատուութեան չթողուր դահէն վար իջնել, լրադիրներու մէջ անցած վէճերու միջամտիլ և իրաւախոհութեան պաշտոն վարել կամ բարձրէն վճիռ արձակել, քանի որ մեր առջև կեցած է նամակ մ'որ՝ ըստ որում այժմ կ'զրուի, առաջալկնար զրուիլ, և քանի որ խնդիրն

Ս. Պատրիարքին և Համատեման եկեղեցականի մը վրայ է : Չկրնար բտուիլ որ Ս. Պատրիարքն արտաքին ճնշման ներքեւ գրած է այդ նա-  
մակը , քանի որ ոճէն կ'երևի որ ինքնարուզի է և անկեղծ , և իր բո-  
լորտիքը դանուղ պաշտօնական անձերու ներհակ կարծիքն ալ կ'զիմա-  
դրուէ : Ուրեմն դադանիք մը կայ այս յանկարծահաս գրոյն մէջ և ըստ  
մեզ այս է . կարելի եղածին չափ մեղմել Առաջ տրուած հարուածին  
պատճառած յուզմունքը մտայ մէջ , հարուած մ'որ երկու կողմն ալ  
շփոթեց՝ ըստ որում արդարասէր և լրագրական ազատութեան կուսա-  
կից համարեալ Պատրիարքի մը կողմէ անյուսալի էր : Հին դրութեան  
օրերն իսկ այսպիսի բռնն տնօրէնութիւն մը տեղի չէ ունեցած : Այն-  
չէնք որ երբ երանաշնորհ Պօղոս սրբազանն պատրիարքական գահն ե-  
լաւ , առեակալէնքէն ոմանք Մեղի սլաքնեքէն զարհուրած՝ Բ.  
Գուռը թաղրի գրելու և խմբագիրն դատաստանի քաշել տալու որո-  
շումն ըրին : Այն տառն Պօղոս սրբազանն՝ ազատամտութեան կողմէ  
մեծ անուն չունենալովն հանդերձ՝ զոչեց . Յետ չեմ կրնար իմ պատրի-  
արքութեան թուականս լրագրի մը դադարմամբ սկսիլ» : Ամեն , Ներ-  
սէս սրբազանին տալով բախան ազատութեան վրայ դասեր տալու չենք  
համարձակիր , ըստ որում ինք սաէպ այսպիսի դասեր և Ամբիկեան  
լրագրական դրութեան վրայ օրինակներ կ'տար և կ'պատմէր Տ. Պօղոս  
սրբազանին , բայց այս իրաւ է որ այս պարագային մէջ իր սկզբունքին  
հակառակ քայլ մ'առած է , այս իրաւ է որ Առաջ վճռական խափա-  
նումն իր վախճած չարեացը խափանումը չէ , այլ ասպաղային մէջ սոյն  
տեսակի փորձանքներ անխորի թէ լաւ և թէ վատ լրագրիներու գլխուն  
բերելու գրդիւ և օրինակ . փորձանքներ , որ իր անուան շուքին ներ-  
քեւ պիտի հասնին և ազգային լրագրութեան պատմութեան մէջ փայ-  
լուն տեղ մը չախի բռնեն : Այսուհետեւ իրաւունք չախի ունենանք  
դանդատելու երբ տէրութիւնն Լաւ Եւրոպայ լրագիր մը խափանէ 'ի  
սպառ , և եթէ առարիկնք մեղի սկիւի ըսէ . «Ձեր սիրած և աղղովին  
ընտրած Պատրիարքն՝ որ յետագէմ և ազէտ մարդ չէ , մեղի տուաւ  
այդ օրինակն» :

Բայց ինչէր Առաջ յանցանքը . ինչ որ ամէն լրագիր փոքր 'ի շատէ  
կ'դործեն , այս է ժողովոյ գէմ խօսիլ : Բայց խօսիլ դործել չէ , և Ա-  
ռաջ յարձակումներն Ընդհ. ժողովոյ գէմ քանի որ իրական արդիւնք մը  
չեն ունեցած և չէին կրնար ունենալ , շօշափելի և գատելի դործեբու  
կարդն անդամ չէին կրնար անցնիլ , թող թէ մահու վճիռ ընդունիլ :  
Ինչպէս նա կ'զրէ դէմ , այլք կ'զրեն 'ի նպաստ , և եթէ իրօք չարիք

մը պիտի պատահէր առաջնոյն դրութեամբը , այլոց դրութեամբն այդ  
չարիքը կ'հակակշռուէր , ապա թէ ոչ Ասիայի պէտք եղածէն աւելի  
կարևորութիւն տուած կ'ըլլինք , 'ի նախապէս միւս լրացիւններու ։  
Ժողովոց դէմ ծանրագոյն դրութիւններ տեսած ենք և պատրիարքարանը  
լուռ կեցած է . . . : Ասիոյ բուն յանցանքն խրիմեանի համար ջերմ  
պաշտպանութիւն էր բերելու կ'միտինք , և իր բերանը պրկելով կաս-  
կածներ երևան կ'ենէն թէ Ս. Պատրիարքը հակախրիմեան կուսա-  
կցութեան փախաքը կ'կատարէր , բայց հարուածին ծանրութիւնը  
տեսնելով՝ յանկարծ ուշաբեր և մէկ ձեռնով պատուածն միւսով կար-  
կտելու կ'փութար , որպէս զի երկու կողման ալ հաճելի դործ մ'ըրած  
ըլլի : Բայց կարկանդակ միշտ կարկտան կ'մնայ , և հազար նամակ՝ լրա-  
գրի մ'անդատաստան խափանումը չգարմաներ : Միակ գարմանն՝ նոր  
թագրիրով մը՝ Ասիոյ վերահրատարակութեան արածութիւն խնդրելն  
է : Վասն զի այս կերպով միայն արդարութեան սկզբունք մը բռնու-  
թենէ , և Ամեն . Ս. Պատրիարքն ալ մեղադրանքէ կ'ազատի :



# ՅՈՒՄՈՐ ԸՆՏԱՆԵՆԱՆ

1874—1875 թ.

Ա. հասար

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՅ Տ. ՍՐԲՈՒՅԻ Ա. ԵՐԻՑԵԱՆՅ

Ինչպէս յայտնի է , Տ. Ս. Երեցեանց տարի մ'առաջ յատուկ յայտա-  
բարութեամբ ծանոց բոլոր ազգայնոց վիճակադրական գործի մը  
ձեռնարկելու դիտաւորութիւնն , և այս նպատակին համապատասխա-  
նող հարցումներով զանազան հայաբնակ քաղաքներէն տեղեկութիւններ  
խնդրեց , որպէս զի ամիսի գիրք մը հրատարակելու կարողանայ ։  
Արդ՝ Տ. Ս. Երեցեանց իր խոստումը պահեց և ահա այսօր կ'տեսնենք

գրական աստղարկին միայն իր տեսակին մէջ գրեթէ նոր աշխատասիրութիւն մը զոր 'ի կատար հանելու համար ոչ միայն ինքը և հմուտ թիւն , այլև հայրենասիրական բոլի և մեծ համբերութիւն պէտք են :

Կեր մէջ ինչպէս շատ բաներ՝ վիճակադրութիւնն անմշակ վիճակի մէջ է , և հայոց նկատմամբ ամբողջ և անթերի վիճակադրութիւն մը յօրինել ամենալժուարին ձեռնարկութիւն մը : Վիճակադրութիւնն բազմադիմի գործողութիւններ կ'սարունակէ , և բարեկիրթ տէրութիւններն անդամ իրենց սլաշտօնական անթիւ միջոցներով հազիւ կարող կ'լինին իրենց երկրին այլ և այլ հանդամանքն որ ազգահամարի , արտադրութեան , ճարտարութեան , վարչութեան , հասարակային սլաշտօններու , շինութեանց , դանձուց , և այլոց կ'վերաբերին , պատկերէ : Թող հայոց ժողովուրդն որ աչմայն ցիր ու ցան և անտարբեր է իր ընկերական իրողութիւններու հետամուտ լինիլ այլև սոցիալական թիւններն ամփոփելու աշխատող ջանատի անձերու իսկ ձեռնադրանքներու շատ անդկ'դանդաղի : Այս ամէն դժուարութեանց յաղթելով՝ Տ. Ս. Երկրեանց յաջողութիւն իր Տոմարն յօրինելու և իրատ օգտաւ լէտ դիտելիաց հետ , Թուրքիայի հայոց միայն , եթէ ոչ միշտ ստոյգ և դոհացուցիչ՝ դէթ հետաքրքրաշարժ վիճակադրական տեղեկութիւններ տալու , երկրորդ հատորին թողլով՝ սառցուցութեան կարօտ և հետզհետէ ստանալիք ծանօթութիւնները :

Յիշատի որ Տ. Ս. Երկրեանց կ'ստատմանի թէ իր առաջադրած գործին միայն մէկ մասը կատարած է , դարձեալ Տոմար ընդանկանն մեծ քայլ մ'է հայ վիճակադրութեան մէջ : Ահա Տիկին մ'որ իր առանին հոգերու մէջ ժամանակ կ'դնէ , չէ թէ՛ շատ մը կանանց պէս՝ հազուստի ու կասկածի և սնտի իրաց պարասելու , այլ հայոց վերաբերող իրողութիւններ հաւաքելու , դտելու , ամփոփելու , եզրակացութիւններ հանելու և ազդին մեծ ծառայութիւն մը մատուցանելու : Այսպիսի յարատե ուշադրութիւն պահանջող գործ մ'աւելի սուսական հաշտատամութեան արդասիք է քան թէ կնային , սակայն Տ. Ս. Երկրեանց ցոյց կ'տայ որ կանայք անդամ՝ թէ կամենան՝ կարող են կենտոտ նիւթեր սրարել և ծանր աշխատութիւններ տանիլ :

Ընդանկան Տոմարը մանր քննադատելու և բովանդակութիւն մը տալու տէրքը չենք ունենալ , վնաս զի այսպիսի երկասիրութիւն մը միայն օրը թիւն թեան և ամէն հայտ ձեռքը դնողներու արժանի է , որպէս ինչ ինքն 'ի շատէ ծանօթանայ ազդին վիճակին :

ԱՊՍԷՈՒՆԵԱՆ ԿԱՐՁԱՐՆ

Տարտանեւէն նամակ մը ստացանք որմէ կ'քաղենք հետեւեալ տողերը .

«Ապրիլն յայտնի ճշմարտութիւն մ'է թէ ազգի մը մանկտոյն բարոյական և մտաւորական զարգացումն ու յառաջագլխուն թիւնն օրինաւոր դպրոցներու դրոյթ թեւէ և հետզհետէ նոցա բազմանալէն կախումն ունին : Այս պիտաւրով ահա քաղաքիս ազգայնի ժողովուրդն՝ ըստ իւր կարողութեան նպատակ շնորհելով՝ երկուեւ. դպրոցի մը շինութեան ձեռնարկեց , բայց այսու ամենայնիւ հաւաքեալ պիտանաւ թիւնն և քաղաքիս հայ հասարակութեան աղքատութեան պատճառաւ երկրորդ անգամ նպատակաւ անբաւարարութիւնն զպրոցին կիսկատար մնալուն պատճառ եղաւ , որով տնայտեսներ ազգային երեւելոց պիտէ և նոցա օժանդակութիւնը հայցել ( յորոց ոմանք արդարեւ չըլայան քիչ շատ ձեռնառու լինիլ ) : Այս նպատակաւ հաւ. Ջմիրոնիա հանդանակութիւն մը բանալու կարեւորութիւն անհուկեալ , որոյ համար կնքեալ տետրակ մը յատկացնելով հատարիմանձի մը ( ՅԵԾ . Գարբիէլ Իզմիրլեան ) յանձնեցինք , յորում հետզհետէ եղած արդիւնքը պիտի նշանակուի : Առ այս կ'իմպրեսիոն որ բարեհաճէք ձեր հանդիսին մէջմի քանի տող զոհեւ և յորդոր կարգաւ Ջմիրոնաբնակ ազգայնոց որպէս զի իւրաքանչիւր կարող անձինք չղանան իրենց լուծման յօդուս քաղաքիս ազգային մանկտոյն . . . »

Արդարեւ այսպիսի ազգօգուտ ձեռնարկութեան մը նպատաւատարոյ լինելու համար մեր հայ բնակիչներն հանդիսիս յորդորանաց կարօտ չեն : Տարակոյս չունինք որ ամէն ազգային՝ ըստ կարողութեան՝ այս հանդանակութեան մասնակից պիտի պանուի՝ մտածելով որ ոչ միայն ուսումնասիրական այլ քրիստոնէական պարտաւորութիւն մը պիտի կատարէ : Մեր հայ բնակիչներն առաջին անգամը չէ որ այս սեռակ նպատակներ պիտի հայթայթեն ուսումնատեսնչ այլ կարօտ ազգայնոց , արդէն շատ անգամ իրենց առատաձեռնութիւնը վայելած են՝ ոչ միայն Տարտանեւէ՝ Սիւնեաց ընկերութեան ժամանակ՝ այլև ուրիշ թեմական ժողովուրդներ՝ որոց վրայ՝ իրաւ է որ երբեմն աւելի անմիջական օգ-

տաւէտ ներգործութիւն ունէր : Զմիւռնաբնակ ժողովուրդն այսպիսի  
պարագաներու մէջ մահաւանդ իր համբաւոյն համապատասխանող ին-  
քայլք մը բռնելու պարտաւոր է , և քաջայայտ ենք որ Տարածանէլի  
Կարոյին շինութեան ձեռնառ զանուէլով կ'հաստատէ մեր ըսածը :

## ԲԱՐԱՐԱՄԱՆ

Գաւառական խորհուրդներու ընտրութեան առթիւ ՖԻԼԵՍՍՈՒՅԻ  
զանազան կուսակցութիւններն վերատին դէմ առ դէմ ելած՝ իրենց ոյժն  
ու կարողութիւնը կ'փորձեն : Օրէնմանք , Պուրպօսնանք , Պօնա-  
բարդեանք , հասարակապետականք , հանրապետականք , արմատա-  
կանք , եօթնամեանք , եր մէկն ըսենք , ասպարէզ իջած իրենց ընտրե-  
լիներն առաջ կ'քշեն և ոմանք նկուն և ակնկոր ետ կ'քաշուն : Տարա-  
կոյս չկայ որ եթէ ազատական կուսակցութեանց այլ և այլ մասերն՝ յօ-  
ղուս հայրենեաց միաբան և միախառ շարժին՝ հասարակապետութեան  
գաւառ կ'յաղթանակէ : Բայց ցուարկն այն է որ զաղըլիային շատ ան-  
գամ գործելու տեղ կ'վիճի , և անձնական նկատումներով կ'սլառակ-  
տի : Շատ անգամ տարբեր և ներհակ տարբեր քուէտփին առջև իրա-  
րու կ'միանան , ինչպէս Պօնաբարդեան և հասարակապետական կամ  
կառաւարական կուսակցութիւնները , որպէս զի օրինաւորականները  
յաղթահարեն այն պայմանաւ որ ուրիշ առթիւ վերատին զատուին և  
իրարու դէմ մաքառին , քանի որ սկզբունքը չէ՝ զիրենք միացնողն այլ  
պարագայ մը , քուէից ընթացքը , փառասիրական ներքին նկատումը :  
Ուստի բաց 'ի մէկ քանի նշանաւոր քաղաքներէ՝ ուր ազատական տար-  
րը զօրաւոր է , ինչպէս Լիօն , Մարսիլիա , Պորտօ , որ հասարակա-  
պետական խորհրդականներ ընտրեցին , ուրիշ անգիւր՝ Թիբօստ , Սաու-  
րին՝ Շարանդ և այլն , ժողովուրդը տատամնոտ և արտաքին ազդեցու-  
թիւններէ ճնշուած իր կարծիքը յայտնելու ազատութիւն չունի , կամ  
կարծիք չունի . ուստի ամենէն ճարպիկ , լեզուանի և իր նախապաշար-

ման , շահուն և բնազդութիւնն պատասխանող ընտրելին դաւառական խորհրդական կ'ընտրէ : Իրաւ է որ երեսփոխանք ոմանք դաւառական խորհրդոց մէջ իրենց ամօրը կորուսելով՝ կ'զգան որ աշխարհային համար չէ , և հանրապետութեան արդի անորոշ վիճակը կ'ընայ վերջապէս հաստատուն կերպարան մ'առնուլ այս Եւրոպայ քաջն անցնելէն ետեւ : Կանգէլայի և Թիէրի ատենախօսութիւններն , մին 'ի Արքիեպիսկոպիտ և միւսին իր ուղեւորութեան ժամանակ գէպ Խտալիա , աւելի ներդրածեցին ժողովրդեան վրայ քան թէ կառավարութեան ընտրելիաց հնարքը : Առաջինն՝ հանրապետական տարն դաւառական ժողովոց մէջ զօրացնելու կարեւորութեան վրայ , երկրորդը՝ սահմանադրական հասարակասիտութեան 'ի նպատակով : Աւերջապէս Օքլենդ նաւն՝ որ չորս տարիէ 'ի վեր Հոլոմի ջրերը կ'ստանէր՝ իբրեւ Աւատականութեան քանդակարար յետին ապաւենն , թէ և իրօք Պրանսայի առ Ս. Պապն սիրոյն , միութեան և սլաշտպանութեան նշանակն էր , և Խտալիոյ աշխարհն փուշը , կ'հեռանայ , և կ'ըսուի թէ անոր տեղ Բէռլին տիտի դոյ Այալիօ՝ որ 'ի հարկին Պապն ընդունի : Կառավարութիւնը 'ի վաղուց կ'բամբասուէր իբրեւ Գարլուստանց ձեռնառն , և Տէքալ՝ արտաքին դործոց սլաշտոնեայն՝ այս ամբաստանութիւնը Մատրիաի դահլճին՝ այս է Պիսմարզի՝ առջեւ ջրելու կ'ճգնի : ԳԵՐՄԱՆԻԱ մէջ ընդհանուր ուշադրութիւն դրաւող գէպքը Արիմ կոմսին՝ երբեմն Բարիլլու գեպաւնին , մեծ գիւնասպետին բարեկամին բանաստղելութիւնն է զիրաւանական դրութեանց ստանաւառ , զոր կոմսն իբրեւ առանձին թղթեր յանձնելու մերժեր է : Կ'հաստատեն թէ այս թղթերն Պիսմարզի և Պապին մէջ անցած բանակցութեանց կ'վերաբերին , այս վերջնոյն աշխարհական իշխանութեան և անսխալականութեան մասին , և թէ Գերմանիոյ և Պապութեան մէջ ծագած մեծ սլաշտարին գաղտնիքն այս դրութեանց մէջ է : Արդէն մէկ քանին Ալեքսնա անանուն հրատարակութեան նպատակը քաջ ևս կ'իմանար քան թէ Պիսմարզ իշխանն որ իբր թէ տրամադիր կ'երևէր գործն անուշ տեղը կապելու : Ոմանք ևս կը հաստատեն թէ Պ. Արիմէ առ Պիսմարզ ուղղեալ մտանաւոր տեղեկագրութիւններ են Եւրոպիոյ քաղաքական ընթացից վրայ , և թէ իշխանն սոյն դրութեանց մէջ իրիստ ծանր դիտողութիւններ ընելով կոմսին գարձուցած է , և կոմսն իբրեւ իւր սեպհականութիւնը քովը կ'ստանէ : Ինչ և է , Գերմանիոյ իրաւագիտաց վճռոյն համեմատ՝ օրէնքը , և փոքր ինչ Պիսմարզի ներքին քննախնդրութեան ողին , Արիմ կոմսին

դէմամբատան կ'ենին և այս տաղանդաւոր և նշանաւոր քաղաքադէ-  
տը բանաւր կ'նկատեն : Արեւիմի դատաստանը մօտ օրերս պիտի աւանդուի ,  
նոյն ինչ Պիսմարը վիպու թեան պիտի կոչուի կ'ըսեն , բայց՝ բժշկաց  
վիպու թեան համեմատ՝ Արեւիմ՝ բանաւն կ'արձակուի երաշխաւոր ցոյց  
տալով՝ և Նիսա պիտի երթայ իր առողջութեան համար : Գերմանիա՝  
Ռուսիոյ և Ֆրանսոյի պատերազմական պատրաստութիւնները տեսնե-  
լով՝ հարկ կ'սեպէ նոր օրինօք զինուորական ծառայութենէ ազատ  
դանուող մարդիկն 'ի դէն կոչել , այսինքն landsturm երէքէ Գրէքէ :  
ՍՊԱՆԻԱ միշտ նոյն անստոյգ վիճակի մէջ է . հասարակատեան  
զօրաց մէջ անկանստութիւն , Սերբանօի կառավարութեան ապիկարու-  
թիւն , Մօրիօնէս զօրապետին անձարակութիւն , դրամական նեղու-  
թիւն , Գարլօսեանց սոսկալի անց թու թիւներն ու դորձած աւերում-  
ներն են ընդհանրապէս այս երկրին լուրերը : Ալճաական դորձ մը  
չկայ : Անձրեւներն արդեւք եղեր են Մօրիօնէսի պատերազմ տալու  
Բանքէլունայի մօտ Տօն Գարլօսի : ԱՆԿԼԻԱ՝ արքայական հիւր մը  
ընդունելու կ'պատրաստուի , այս է Ռուսիոյ Կայսրուհին : Հնդկաստա-  
նի մէջ սովոր դրեթէ վերջացաւ , կառավարութեան անխոնջ ճգնադր և  
հեռատեսութեան շնորհիւ , և Անկլիոյ ժողովրդեան առատաձեռն  
նպատանքով : Սակայն ՓՌՔԻ ԱՍԻԱՅ սոփե տակաւին կ'առաւելու  
դէրմէլի ժողովուրդ մ'որ Թուրքիոյ մայրաքաղաքէն շատ հեռու չէ ,  
և առելի մեծ օգնականութեան յուսալու իրաւունք ունի քան ինչ որ  
ցարդ մաս առ մաս ընդունած է : Աղէտալի լուրեր կ'հասնին ամէն  
օր , և սովալլուի բնակիչներ կ'ըստիտին անաւերոնջ և անօգնական  
ամայի վայրեր որ տնուր մը դանեն : Արդարեւ մայրաքաղաքը յատուկ  
յանձնաժողովներ կազմուած են ամէն հասարակութեանց կողմէ  
նպատտ հաւաքելու , սակայն սոսկալի պատուհանին առաջն առնելու  
համար տուելի անմիջական միջոցներ պէտք են : Յշ միայն կառավարու-  
թիւնն այլև ամէն անհատ այսպիսի պարագաներու մէջ պարտաւոր է  
մարդասիրութեան ու զթու թեան հարկը վճարել և անթիւ մարդկային  
արարածներ մահուանէ ազատել :

\* Բրբկազօրն (եթէ կարելի է այսպէս անուանել) ԷՅ տարեկանն մինչեւ  
ԷՅ տարեկան մարդիկ կ'պարտմակէ , եւ 'ի զէն կ'կոչուի միայն երբ Թշնա-  
մին հայրենի հողը արշաւէ . ԷՅՅՅի պատերազմին մրրկազօրն 'ի զէն  
չկոչուեցաւ , ուստի կ'հետեւի որ ապագան շատ սպառնալից կ'երեւի Պեր-  
մանիոյ :

## ԱՄՈՒՐԻԻ ՄԸ ԵՐԱԶՆԵՐԸ

### ԾՈՒԼԸ

Երբոր յեախոյս կ'նայիմ, մանկութիւնն իր ցաւերով և հոգերով՝ պատանեկութեան վէս պերճութեան մէջ կ'նուաղի : Դպրոցական կենաց փառասիրութիւնն և ուրախութիւններն, իր առաջին պարծուկ կարեւորութիւնն, քանի ղիտութիւնը կ'ծաղի արթուն մտայ վրայ, կ'սահին կ'անցնին իմ յիշողութենէս, մարդերու վրայ համապիւռ փշող քամիւն նման, և ասոր պէս նաև, իրենց լմեւրուն վրայ սառնաշունչ ցրտութիւն մը կ'բերեն :

Պէն մեծցեր զրեթէ մարդ եղեր էր . Լիլի հեռաւոր տուն մը լը բնակէր, և Ղապպէ կ'ծաղկէր այն անուշ հասակի մէջ երբ կնային մեծավայելչութիւնն իր դեղեցկութեան կ'սպասէ . տարիք մ'որ վշտաղին կ'շփոթէ այն որ ներա մօտ տպրեր էր — այնպէս որ լեղուն կ'կապուի, բայց սիրտը կ'վառի :

Ծոմի իմ շուրջս է : Յետին սարաւանդներն հորիզոնին ներքև կ'սուղին, քաղքի աշտարակներուն նման՝ երբ ամայի դաշտերու մէջ մոլորիս, կամ հանճարի վսեմ խորհուրդներու նման՝ երբ բանահիւսին դրուածքէն կ'սահիս քու յատուկ հանդարտիկ մտմտութիւն կ'դառնաս :

Ջրերը կ'պատեն զիս, աջ ու ահեակ . ջուր կայ միայն իմ դէմն, ջուր միայն իմ ետևս : Վլխուս վերեն օդապար ամպեր կ'երևին, կամ կապոյտ կամարը զոր տղայական աղատութեամբ երկին կ'անուանենք : Առաքասաներ՝ սպիտակ ու հովալիւ՝ իբրև զօրավիզ բարեկամներ՝ զիս ընդ առաջ կ'մղեն, և զիշեր ու ցերեկ կ'յաջորդեն իրարու՝ հովերու պէս՝ որ կ'զան ու կ'երթան ոչ որ զիտէ ուստի՝ և ոչ որ զիտէ՝ ուր : Յամաքի թուշտն մ'որ օդին մէջ կ'սաւառնի, ընդ երկար թռելէն յողներ մոլորեր է այնպիսի աշխարհի մը մէջ ուր չկան ուրիշ անասուններ բայց միայն կօլմնահակ կայմեր, և ոչ ուրիշ տերեւներ, բայց միայն փրփրազէզ հոսանքք : Պահ մը նաւուն շրջանակին վրայ կ'դադարի, բայց հայրենի տենչով մը վառեալ հովին զիմադրաւ կ'սրանայ և ալէժուփ ջրերուն մէջ կ'իջնէ կ'ննէ, մինչև որ ուժը կ'սպառի, և կապոյտ կօհակներն իրենց պաղ ու սառնորակ ծոցը կ'ընդունին ողորմելի թռչնիկը :

Բոլոր առաւօտ՝ իմ առջևս ուրիշ բան չեմ տեսներ բայց միայն ջուր կամ յարաշարժ կէտերու խումբ մը . բոլոր միջօրէին՝ եթէ հորիզոնին վրայ ճիւղադալէմ սպիտակ առադաստ մը չտեսնուի, ուրիշ բան չերեւի

բայց միայն հասանաւ ծովը . բոլոր իրկուն՝ արեւը խոշորնալով մարը մանեւէն , և լուսինն՝ սպիտակ ու սպող երնելով՝ փրփրալի օվկիանոս սարերու վրայ շողալէն ետե՝ ուրիշ բան չտեսնուիր բայց միայն ծովն ու երկին որ մարդուս միտքը կ'վերացնեն կամ իրենց վեհմութեամբը կ'ճգմեն :

Մինչդեռ այսպէս ժամերով կ'նստիմ բարձրաւանդանին (taffrail) վրայ , կ'դիտեմ լուսնային ահագին կոհակներ որ հեռուն կ'դիզուին և կ'խորտակին — և աւելի մօտենալով կ'դիզուին և ահեղագոյն կ'խորտակին — և դարձեալ դիզուելով կռնչողնաւուն ներքեւ կ'թաւալին աբաբ և ահաւոր , զայն թեթեալի վեր կ'հանեն ուռելով և վերստին մեղմիկ կ'նետեն իրենց եռուն և փրփրալի օրորանին մէջ , մօր մը դրկաց մէջ օրորող մանկան սկէս , կամ առնի մտածութեան կոհակներու վրայ իբրեւ աղօտ յիշատակ :

Խլիճը կ'զարթնու. ովկիանոս լին ղիշերներն . կեանքն իբրեւ դիրք մը բայ կ'մնայ և ծովուն սկէս հարթ հաւասար կ'հոսի : Գիշերային սրաթուխ թռչուններու պէս վիշա , կարօտ և թերի խորհուրդներ կը սաւառնին հողիդն վրայ , և յիշողութեան բազմալոյզ այլ վճիտ անդունդէն որոշ ու պայծառ դուրս կ'ենեն մեր անկայուն դործոց ախուր վախճանը :

Սակայն իմ գտնուած ալէծուսի աշխարհին վրայ համակրութիւնները կ'ամբիօքին և՛ ինչպէս ցամաքի վրայ՝ չեն կարող հաղար տեսակ առարկաներու վրայ ստարածուիլ : Ա'դարմանաս որ ուշք կ'դրաւ վտիտ օրիորդ մ'որու գունատութեան յաջորդեր է ծովային կենաց կայտառութիւնը : Եռանդալին միտ կ'դնես վարէն լսող պատահական երգի ձայներու և կ'յափշտակուիս , մինչդեռ երկար առաւօտներ կ'հսկես : Ա'ախորժիս տեսնելնէրա փոքրիկ ոտքն որ անկայուն կամբջին վրայ կ'երերին , և չափէն աւելի կ'բերկրիս երբ նէրա քայլը ուղղես և մարմնոյն ծանրութիւնը թեիդ վրայ դդաս , մինչդեռ նաւն սպառնալի ծովուն վրայ կ'ճգնի :

Ովկիանոս վրայ յոյս և երկիւղ սիրովին կ'իջորդին : Աարծեւ թէ աւէն օր անոնց նոր սնունդ կ'տայ . քու առաւօտեան ողջոյնդ՝ բացակայութենէ ետք ծովեզրի վրայ եղած տեսակցութեան կ'նմանի , և ամէն «բարի ղիշեր» ցամաքի վրայ տրուած ողջոյնի մը մեծութիւնն ու լիութիւնն ունի : Եւ ովկիանոս վրայ դեղեցիլութիւնը կ'ծաղկի : Ի հարկէ չես կարող ըսել որ սիրուն ուղեորին դէմքը քան Իզապէլինը չքնաղ է . Քհ , ոչ , բայց այս ստոյգ է որ անմեղ և բարեկիր ակնարկներ կ'արձա-

կէս հէրա վրայ , մինչդեռ հէրա քայլը կ'սնդեն կամօրջին վրայ աւելի տեղւոյ քան դառալինն . և ծովային կեանքն ու համակրութիւնն զինքը քարեսիրտ կ'ընէ . քու անվայելուշ ընթացքդ այնքան ծանր չլսոնք որչափ որ սկիտի գանէր եթէ ինք ցամաքի վրայ լինէր :

Երկուն մը սկիտի հսկէ հէ և հախ իր մօրը հետ սկիտի վերը մնայ խօսակցի , քու քովդ սկիտի կայ առնու , իր սպիտակ ձեռնն ցանկին վրայ դնելով քու ձեռքէդ ուշատ հետու . վար ծուլով սկիտի հայի սև հաւն որ քանի սուրայ զմրութեալ պատկներ կ'յօրինէ . կամ վեր սկիտի հայի հէ (կարելի է մտածելով որ դու ևս նոյն տեղը կ'նայիս) երկնից երեսը , ասող մը վնասելով որ երբեմն իր դրացին էր տունը : Ծովու ամայութեան մէջ մանր մունր վէպեր սկիտի պատմէք իրարու . հին քերթուածներու կտորներ սկիտի արտասանն օրկորն դողողուն շրթներով — թերևս հաւու շարժումն , կամ սպիտակ ձեռքին մէկ սլափահ հակն գպումն :

Բայց ովկիանոսն իր փոթորիկներն ունի , մինչդեռ երկիւն տարօրինակ և հուրիական բարեկամութեան զօղեր կ'կապէ , և աստ ևս իմ յիշողութիւնս կ'հայթայթէ ինձ յանկարծ ահեղ մրիկ մը նկարագիրը :

Ահա որ զիշեր մ'է : Նաւորդները վարը հաւաքուած կ'դողդողան : Ամէն տակտակ կ'զղզղի , և կաղնի կողքը կ'շառաչեն որպէս թէ կը տառապին վաստակաբեկ : Ամէն ձեռք գործի է , հաւապեան իր օդնա-կանին հրամաններ կ'արձակէ բարձրաձայն , և ես կողմնացոյցն մէկ խեչակէն բռնած կեցած եմ : Նաւը մը կ'հարար կ'տատանի և ալիքն վեր կ'ոսանուն և երբեմն այնքան կ'բարձրանան որ առադատական ծայրը կ'հասնին և ապա դողը կ'թափին այնպէս ստոյաններով որ հաւու մէն մի ատաղձը կ'սարսի : Երկին կ'զոռայ որպէս թէ անհամար թնդանօթներ կ'պայթին , և երբ մերթ ընդ մերթ հրափայլ հոսանք մը ամպերը պատուելով կ'հասնեն որուն սարը կ'լուստորէ , թաց կամուրջն ուղանկերը կ'շողացնեն — այնպէս պայծառ լոյս մը փռելով որ կարող եմ կայմն ծայրը տեսնել հաւաստներուն գէմքը և առադատական լին վրայ կ'նշմարեմ օղակաւորներն (reefer) որ մահուան պէս կը յարին — ասպա ամէն ինչ ահուելի մթութեան մէջ կ'ընկղմի :

Փրփուրը լայնալիցն կ'ժայթքի կտաւին գէմ , ալիքը լեռնեբու ոլէս հաւուն զլուիը զարնելով կ'խորտակին , հովը սլաքաններուն մէջէն կ'ոռնայ և երբ առասան մը կ'կտրի , առադատան հովին կողմն ուղ-դուելով՝ հրացանի պայթումի պէս կ'պատառի : Ա'լեմ հաւապետին քայնն որ հրամաններ կ'աղաղակէ , և օդնականն որ նոյն հրամանները

կ'գոչէ մինչև որ փայլակն և ապա որոտումը գալով՝ կ'փարատէ անոնց աղաղակներն որպէս թէ ճշող ճանձղակներ լինէին :

Անգամ մը փայլակին լուսովը կ'տեսնեմ ձեռք մ'առագաստակալին վրայ . նաւաստիին ոտքը կ'սաճի՝ նաւը խորասուզելու ատեն , բայց իր թեւերովը կ'փաթթուի ցանկին : Մթու թիւնը դալով ուրիշ բան չեմ տեսներ և որոտընդոտ շանթն իմ ականջս դրեթէ կ'խլցունէ : Աարծեմ լսել մեղմ ձայն մը , և մրմունջներ որ երթալով կ'նուաղին հեռուն , և երբ նորէն կ'փայլատակի՝ կոհակի մը սարը կ'նշմարեմ ողորմելի օղալամբարան որ ծոփը ընկեր էր : Փայլակն անոր դէմքը կ'լուսաւորէ :

Բայց ընկնելու ատեն կոյտ չուանի մը կտորը բռներ էր , որ կամըջին վրայ կ'գալարի : Բոլոր ուժովս կ'սլուամ . «Մտրք մը ծոփն ընկաւ» և պարանը կ'բռնեմ երբ դարձեալ չորս կողմը մութը կ'կոխէ : Ծովը շատ ալէկոծ է , և մարդն ինձի համար շատ ծանր : Գարձեալ կ'աղաղակեմ , կ'աղաղակեմ շարունակ , և ճակտէս առատ քրտինք կ'հոսի տեսնելով որ չուանը մատերէս վար կ'սաճի :

Նոյն պահուն նաւասպետը կ'յաջողի իմ քայլս դալու , և կ'սկսի ինձի հետ քաշել , ապա խոհարարն օգնութեան կ'հասնի և միասին կ'քաշենք : Յուսահատական դործ մ'է այս նաւաստիին համար , վասն զի նաւը սոսկալի կերպով կ'տատանի , բայց նա կ'իսամեռ մտրդու մը պէս պարանին փաթթուած է :

Քիչ մ'ետք՝ փայլակին լուսովը կ'տեսնենք նաւաստին կոհակի մը վրայ , և նաւէն երկու թիակի երկայնութեամբ հեռու է :

«Պինդ բռնէ , բարեկամ» կ'սլուայ նաւասպետը :

«Աստուծոյ սիրոյն , շուտ ըրէք» կ'ըսէ խեղճ մարդը , և երկու ալիսաց մէջ կ'ընկղմի : Ա'սկսինք աւելի ուժով քաշել , և նաւասպետը շարունակ կ'սլուայ անոր որ արիանայ և պինդ բռնէ : Բայց լուրթեան աւտեն կ'լսենք նաւաստիին ձայնն որ կ'ըսէ . «Զեմ կարող աւելի ևս դիմանալ — պէտք է որ թողում» :

Ի վերջէ մարդը քաշելով կ'բերենք այնչափ մօտ որ կարող ենք զանի բռնել , և միայն կ'սպասենք որ ծովը բարձրանալով զանի վեր հանէ , երբ յանկարծ մարդը կ'հեծեծէ . «Անօգուտ է . . . ոյժս հատաւ . . . մնաք բարեաւ» : Եւ կոհակ մը չուանին վարի ծայրը նաւուն կողմը բռն կ'զարնէ պարապ :

Երկրորդ փայլակին՝ կ'տեսնեմ մարդն որ ծովուն տակը կ'սուղի :

Ծանր ծանր վար կ'իջնեմ՝ հիւանդ ու սրտաբեկ . կ'նետուիմ փոքր

րիկ անկողնոյս մէջ և քնանալու կ'ճգնիմ : Բայց որոտումն ու նստուն ելէէջը , և ծովամայն մարդուն գէմքն որ ամէն կողմէ կարծես թէ աչքիս կ'երեւէր , չլծողին որ ննջեմ :

Հուսկ ուրեմն ծովը կ'հանդարտի , նաւն անոր վրայ կ'սրանայ՝ իր ետեւէն թողլով՝ դիշերայն՝ փոսփորեան շքեղափայլ շաւիղ մը : Նստատիները կամըջին վրայ կ'երթեկեն , որպէս թէ ընկեր մը չեն կորուսած , և ճամբորդներն՝ երկիւղի դունատութիւնը կորուսեցով՝ եռանդաղին ցամաքի հետք կ'փնտռեն :

Ի վերջէ իմ աչքս Բրիտանիոյ ցանկալի դաշտերուն վրայ կ'հանդիմն , և օր մ'եւս անցնէն ետեւ՝ իմ քովս դանուող դեղանի օրիորդին պայծառ գէմքը կ'շողայ՝ Էսսէքսի դաւարաւէտ ծովափանց վրայ սիրուն հիւղերը դիտելով : Լայն առադաստով նստակներ , որ տարօրինակ այլ դեղեյելի կ'երեւին , Թէմզի ջրերու վրայ կ'սահին կարասներու պէս , սև , քառակուսի կուրեր ածխալի , խումբ խումբ կ'իկնան իրարու մօտ , և ծանր , եռայարկ նաւեր մակընթացութեան հետ հանդարտիկ վեր կ'իկնեն : Մթաղոյն , սպիտակ ու կարմիր ծխահաններով շոգենաւեր՝ սուրալով կ'անցնին մեր քովէն և գէպ 'ի ծով կ'դիմեն , և ահա աչքս կ'դադարի Արլինիչի մեծ ապարանին վրայ : Ա'տեսնեմ փայտոտն զօրականներն որ պալատին պատերուն տակը կ'ծխեն . . . :

Ի վերջէ՝ մթին ամպերու մէջէն Ս. Պօղոսի դմբեթն , Արակի Առթողն և Լոնտոնի Միջնաբերդին սպիտակ աշտարակները կ'նշմարեմ : Մեր նաւն ահագին առաջաններուն դռնէն կ'սահի և կայմերու անտառի մը մէջ՝ որ Բրիտանացւոյ ոսկի պտուղներ կ'բերէ , իր խաբիսը կ'նետէ :

Այն դիշեր «իմ հին դպրոցէս» շատ հեռու կ'սլաակիմ : Ընդ երկար կ'տաղալիմ իմ անկողնոյս վրայ՝ Լոնտոնի այլ և այլ նշանաւոր վայրերն իմ աչքիս առջև բերելով . . . : Եւ երբ վերջապէս կ'քնանամ՝ անուշ երազներ կ'տեսնեմ , բայց այս երազները զիս կ'առնուն կ'տանին ովկիանոսէն անդին , Լոնտոնէն հեռու , նոյն իսկ սիրուն ուղեգրուհիէն հեռու — իմ վաղեմի կայնիներուս ներքև , իմ առուակներուս մօտ — քու քովդ , անուշիկ Իզապէլ :

#### ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿԻՐ

Մեծ տարբերութիւն կայ ծովային կենաց դիւր և անդարդ ընթացքին և ցամաքային կենաց շքեղադրդ և պայմանական ձևերուն մէջ :

Հաւու մէջ ստիպաւ թիւ են մարդիկ որոց հաճելի լինելու կ'փախարկենք և ասոնք իրարու ծանօթ են, խոկցամաքի վրայ աշխարհ մը կայ, և օտարներու աշխարհ մը: Ֆառաւոր սրահի մը մէջ՝ որ հին Չէրին Բթօսի մէկ կողմը, և միայն Եկեղեցի վրայ կ'նայի, Եկեղեցին որ կանգուն կ'մնայ իր պարանի կողմին մօտ, իմ ծովային ղեղանի ընկերուհւոյս հրաժարական բարեւս կ'տամ: Իր սպիտակ առ տնին ղեկստին տեղ մեւտաքսէ ղեկստներ հաղեր է, և սլարդ, անշուք ղլխանոցը՝ զոր ովկիանոսին վրայ կ'կրէր՝ հանելով նորելուկ զգալ մը դրեր է: Ստիպն իր գէմքը մի և նոյն փայլն ունի, և իր աշունքը կ'շողան, ինչպէս որ ինձ կ'երեւն, աւելի վէտութեամբ. և կարծեմ թէ իր փաթիլի ձեռքը կը գողգողայ (անտարակոյս իմ ալ գող կ'երեւն) մինչպէս անոր հրաժեշտս կ'տամ և ապա կ'սկսիմ Անկլիոյ մէջ իմ աստանդական ուղևորութիւնս շարունակել:

Հին Անկլիա դեռ ևս հին սիրելի Անկլիան է, թէև որչափ որ կ'ուզես թշնամանէ զայն, որչափ որ կ'ուզես իր սովամահ զիւղացիներուն վրայ զլծա, որչափ որ կ'ուզես ծաղրէ անոր արքունական շքեղութիւնը: Իր հիւրերն, իր դաւարի գաշտերն, իր զղեակները, իր տաքուկ տունները, իր եկեղեցւոյն սլաքները բանաստեղծութեան չափ հին են, և զանոնք կ'ժառանգենք սրտովին իր երգերովն ու վէպերովը:

Արեւմտեան սաքսոնն տարօրինակ զգայութիւն մը կ'համակուի երբ առնէն առաջ Անկլիոյ կանաչադեղ ծառուղիներուն մէջէն կ'ճեմէ և ուղիղ ամսոյն ծաղկաւէտ թուփերուն հօտը կ'առնու, և երբ վայելուչ ցանկասպատի մը մօտ զեղերելով՝ բարձր մայրի ծառերու շուրջն յղաթեւ և կուշող աղւաւները կ'դիտէ, և հինօրեայ տապարանի մը քանդակեալ քիւները կ'զննէ, և անկլիական սիրուն քերթումներու մէկ քանի կտորները կ'մրմնջէ, որոնք կարծես թէ յատկապէս այս տեսարանիս համար յօրինուած են: Այս տեսիլ չէ բնաւ և ոչ ուղևորութիւն, անուշ երազներ երազել է, որ դրեանց հինաւորաց կեանքով կ'մնանին:

Ա' թափառ իմ ընդ առաջ, առ ահի որ երազս կ'ընդհատեմ արագ քայլ մ'առնելով, և սլատ ի սլատ դնալով ծաղկալի ցանկերէ, քիչ առտենէն կ'նշմարեմ սիրուն հովիտ մ'որու ստորոտն յարգէ տանիքով հիւր մ'աղբիլի արևուն կ'հանդէ ինչպէս կ'հանդէ մեռելը սպտումութեան մէջ, ուրիշ ձայն չեմ լսեր, եթէ ոչ դարբինին կռանին թնդիւնն կամ մշակին հէյ, հէյ բլուրներէն: Իրկունն՝ սոխակին ականջ ղնդլով, ծանրաքայլ կ'դիմեմ անբոյթ զիւղ մը զոր կանխաւ բարձր աեղէ մը տեղ

սած էի : Սովորական արահետէն շատ կ'հեռանամ և տղաք իրենց խա-  
զը կ'ընտրուին որպէս զի ինձ նային , և վաղագոյն երեսով օրիորդներ  
կիտքայ դռներու ետեւէն դադարադուր կ'ընտան զիս :

Մեկուսի կ'դանուի Արծիւ և Շահէն պանդոկն որու գրանք երկու  
կողմը նստարաններ ունի : Պանդոկապետուհին զրեթէ տրամադիր է  
զիս համբուրելու , և այնպէս կ'վարուի ինձի հետ որպէս թէ ծոյսեալ  
իշխան մը լինէի : Նա կ'առնու զիս և փոքրիկ սրահ մը կ'տանի , որ  
սպիտակ վարդոյրներով և հին նահապետներու կոկիկ նկարներով զար-  
դարուած է : Այն անդ բոցավառ կրակարանի մ'առջև կ'նստիմ և կը  
զխամ սպիտակ բոցն որ ամուսին մէջէն կ'ոստոտէ : Պանդոկապետու-  
հին աման մը քաղ յրաւենի կ'մեծարէ սեղանին վրայ դնելով , և կ'ցա-  
ւի որ ընտիր չէ , թէ և ներքուստ կ'հրճուի որ լաւ է : Ժամ մը կրակին  
առջև մտածելով կ'անցընեմ հանդարտիկ կատուին նման որ ներս մտն  
էր ինձի հետ ընկերանալու . և սլակելու ժաման լեռներու օդին պէս  
թափ և մաքուր անկողին մը կ'դանեմ . . . . . :

Երեք ամիս ետք՝ Տիվոն սիրուն զիւղը կ'դանուիմ : Իր հովիտները  
զմբուխտի պէս են . մշակներու շնորհիւ զաշաւերու վրայ առուակներ  
կ'սողակին և արևուն կ'փափլին : Հեղաբարոյ ծեր աղարակապան մը  
իմ պանդոկապետու է : Շուկայի օրիւ աղ որ սև սոյլակ մը հեծնելով  
Թողնէս քաղաքը կ'երթայ . կօշիկներ կ'հալնի որոց ծայրը փայլուն  
են , և լայնածիւր զլխարկ մը : Շատ կ'հրճուիմ անոր պարկեշտ , ու-  
ղիղ խօսակցութիւնը լսելով օրուան բարեկարգութեանց և ազդին վի-  
ճակին վրայ : Երբեմն անոր մէկ երկվարիկը կ'հեծնեմ և միտսին դաշ-  
ղերը կ'շրջիմ կամ մշակներուն սուներն այցի կ'եննեմ , որ իրենց սպի-  
տակ սանիքը կ'ցոյցնեն չքնադադեղ զաշակն մէն մի անկիւնը . . . . .  
. . . : Երբեմն հեռուն բլուրները կ'ընտրուիմ և ծառաստան մ'իջնե-  
լով ժամեր կ'անցընեմ ահագին կայնիներուն ներքե , կ'ընտրեմ թեթև-  
ոտն այծեամներն որ ինձ կ'նային անուշ և կենդանի աչօք , նոյնպէս  
սկիւրներն իմ ստորոտս կ'ընտան ու կ'ոստոտեն , իմ ներկայութեանս  
անմտադիր , և փասխաններն ոտիցս ներքե կ'սլաքալին աներկիւղ :

Երբ անդամ մ'այսպէս մոլորաքայլ կ'շրջի անհոգի և կ'մտածէի  
այն ահագին ծովուն վրայ որ իմ հայրենի անտառէս զիս կ'զատէր , և  
իմ գաւառանով մարդարիտ ծաղիկներու զլուխը կ'կտարէի , անտառին  
մէկ անդէն , ձիերու դափքը լսելի : Այս ձայնն անսովոր էր , վասն  
զի լսեմ էին ինձ որ մօտակայ զղէկին ընտանիքը ստակալն քաղաքը կը  
դանուէր . . . . :

Նախ՝ որտական բարակ մ'աստաստելով գէպ իմ վրայ եկաւ, պահ մը ինձ նայեցաւ և դարձաւ ուր ձիաւորներուն զալուստը տեսնէ : Ապա երեցաւ արբուն աղտոտանի մ'որ վառվռուն նժոյղի մը վրայ հեծեր էր, և իրեն ուղեկից ունէր դէթ տաններկու տարու տղայ մը, և այս տղան շնորհքով կ'վարէր իր երկվարիկն, վասն զի այս ձիավար ժուժիւնն անկիւնական տղոյ դաստիարակութեան մէկ մասն կ'կազմէ :

Իր անունն — որպէս թէ սկիտի կարենայի մնառալ — Քարօլին էր, իր մայրը զինքը «Քէրի» կ'անուանէր. կ'մտածէի թէ արդեօք կ'յարմարէր ինձ Քէրի կոչել : Փորձ փորձեցի, և այս անունն անուշ հնչեց ականջիս : Քանի մ'անգամ փորձ ըրի մինչև որ բնակարանս հասայ : Անդ քանի մը շիլլին տուի կնկան մ'որ մեծ դուռը բացաւ : Խոնարհու թիւն ըրաւ նէ և ըսաւ. «Աստուած օրհնէ քեզ, պարոն» :

Այս խօսքին համար զինքը սիրեցի, ոսկի մ'անգամ տալու տրամադիր էի — արդեօք պատաւ կնկան օրհնութիւնն էր պատճառ, թէ ոչ պատշաճաւն ծածանող սպիտակ թաշկինակը չզրկեմ, բայց այս իրաւ է որ մտքիս մէջ հրապուրելի յայտ մը կար, որպէս թէ հրեշտակ մ'իմ քովս կ'դանուէր :

Գարեցաւ այն, թէ և երազիս մէջ, վասն զի երազեցի որ Խղապէլի անուշ դէմքը կ'նշմարեմ անկիւնական ծառաստանի մը մէջ, և թէ ձիավարժ օրիորդի մը թաշկէ դգակը կ'իրէր՝ փետուրով մը, ապա անոր մօտեցայ և մըմնջեցի շատ անուշ ձայնով, մտածեցի. «Քէրի, սիրելի Քէրի» : Իւ նէ դող ելաւ, ինձի նայեցաւ արտմաղին և թողուց դնայ : Ետէն վաղեցի որ բռնեմ համբուրեմ, ինչպէս որ կ'համբուրէի երբ իմ մօրս դիրքը կ'նստէր, դետամոյն լինելու վասնզն անցուցած օրը. կ'փափաքէի ըսել անոր, ինչպէս այն ատեն ըսի, «Եղ կ'սիրեմ, այն : Բայց նէ իր արտասուալի դէմքն իմ վրայ դարձուց. երազեցի. և ապա բան մը չտեսայ :

#### ՀԱՌՈՄԸՅԵՑԻ ՕՐԻՈՐԴ ՄԸ

Քաջ կ'լիշմբուն այս խօսքը. «Non parlo Francese, Signore — Գրանտերէն չեմ խօսիր, պարոն» ըսաւ խոշոր կինը «բայց կարելի է որ իմ աղջիկս հասկընայ» :

Եւ կինը կանչեց. «Ինքեւս, Ինքեւս — Venite, subito! c'è un so-restiere.» (Հուս եկուր, օտարական մ'եկաւ :)

Եւ օրիորդը ներս մտաւ. իր բայ խարտեշ մաղերը թոյլօրէն ուսե-

րուն վրայ ընկած էին, իր մեղքը աչուներն կ'ըթէին և կենտուրից էին. իր թափանցիկ այտին վրայ վարդեր բայուեր էին և շուտ ընդ փայթ քալում էին հարձակ ինքնին ու կ'իջնէր: Մէկ ձեռնով իր ճակատին վրայ ծածանող գիտակցի տիրոյս նեւեց, մինչդեռ միւսն իր մօրը թևին վրայ մեղմիկ դնելով հարաւային ներգաշնակ ձայնով հարցուց. «Cosa volete, mama?» (Ի՞նչ կ'ուզես, մայր իմ:)

Այս հետեւեալ 31 Գոգեբը հոգեւորական լինելով, պէտք է որ խոր-  
հարցուի 436 Երեսի վերջերս Գոգեբն անմիջապէս ետքը:

Ետեւէն կ'ըսէին երկու ուրիշ երիտասարդք և կառք մը, որու մէջ երկու արբուհ կանայք նստած էին: Բայց ամենէն աւելի իմ ուշ դրաւ ողն եղաւ օրիորդի մը գէմէն որ դորձադոյն և նրբասրուն նոյնի մը վրայ հանգիստ կառքին առջեւէն կ'երթար: Իր կերպերն բնական շնորհ մ'ունէին, և երեսին անուշ կարմրութիւնն — որ աւելի փայլ կ'ընդունէր իր սև թաւ-  
շէ գգակէն, որ միայն ծիւն փետուր մը կ'կրէր — բոլորովին աչքս գրաւեց: Չարմանք էր, բայց մտածեցի որ պարզիս կեպարան մը, այսպիսի գէմք մը, այսպիսի աչք մ'արդէն տեսեր էի. և երբ օտարա-  
կանի մը սովորական ողջոյնը կ'տայի, և անոր ժպիտը նշմարեցի, կա-  
րող էի երգումը որ նէ էր — իմ ծովու սիրուն ընկերուհիս: Ճշմար-  
տութիւնն իսկոյն ըմբռնեցի: Օրիորդն այցելութեան պիտի երթար,  
ինչպէս որ ըսեր էր ինձ, Անկիւսի հարաւային կողմը բնակող բարեկա-  
մի մը, և այս էր իր բարեկամին տունը: Առաքին մեջ դանդաղ կ'իյնէին  
մին իր մայրն էր, և երիտասարդներէն մին իր պարտքի եղբայրն, որ  
ծովու վրայ զինքը նեղեր էր:

Հիմակ լիովին կ'ընթերցէի անկեղծ ընթացքն, երբ իր ձեռնոցը հա-  
նելով ձեռքս սեղանից: Անոնց ուղիկից եղայ: Տիվօն զիւղն իր գեղեցկու-  
թիւնն ինձի համար նորէն զգեցաւ: Պատմեցի օրիորդին թէ ինչպէս  
այլ և այլ զիւղեր թափառելով այն տեղերն ընկայ, և նա զանազան  
հարցումներ ըրաւ ինձ: Բարեսիրտ աղարակապանին հետ աւելի երկար  
ատեն մնայի, և ընդունած երկու առուր աստիճանութիւնս երեք  
շորս օր տեւեց: Չիբրով ստեղծ կ'արշաւէինք ծառուղիներուն մէջ, և  
յաղթ կաղնիներու ներքեւ պտոյտներ կ'ընէի ոչ միայնակ . . . :

Անկիւսիան գեղային կեանքն շուտով զիւր կ'հրապուրէ — շատ շու-  
տով, և շատ զիւրին բան չէ հրաժարական բարեւ տալ, ինչպէս Ձե-  
րին Բրոսի մէկ սրահին մէջ: Բայց վերջապէս հրաժեշտ տուի,  
տրամադրին հրաժեշտ մը, վստահ չի Աստուած միայն դիտէ թէ ինչպիսի  
ատեն պիտի տեսնուի այս բաժանումը: Եւ երբ ծանր ծանր վար կ'իջնէի  
իմ արձակուրդս առնէն ետեւ, յետոյս դարձայ, քանի մ'անդամ դար-  
ձայ: Կարծեցի թէ կ'տեսնեմ օրիորդն պատշգամբին վրայ, թէ և դէմէ  
մտի էր, և կարծեցի թէ — թէ և կրնայ պատրաստ մը լինիլ — ներա  
ձեռքը սպիտակ բան մը կ'շարժէր:

Շատ ատենէ 'ի վեր այսպիսի չքնաղ նկար մը չէի տեսած, թէ և Հռոմի մէջ էի, և նոյն առտու իսկ Պօրկեղի Պալատէն եկեր էի:

Անձնեղ կիներ իմ օթեանի տիկինն էր, և Էնրիքա, որ այնքան չքնաղ, որ այնքան աննման էր զեղեցկութեամբը միւս իտալացի կանանց, իմ տանտիրուհւոյս աղջիկն էր: Տունս այն բարձր, շատ հին տուններէն մին էր, որ Գօրսօյն արևելեան կողմը շինուած են, և Գօլօնայի հրապարակին վրայ կ'նային: Սանդուղները շատ բարձր ու աղտոտ էին, միանգամայն նեղ ու մութ: Չորս հատ քարէ աստիճաններ կ'հանէին նրբագաւթի մ'ուր տանտէրները կ'ընակէին: Գրան վրայ փոքրիկ տկնատ մը կար և զանդակէ մը լարն, այնպէս որ եթէ թեթեւ իսկ շարժէի դայն՝ ստոյգ էի լսել քարէ յատակին վրայ արագասահ տիպ ձայն մը, և ապա ակնատին մեղմիկ բացուիլը տեսնել, և այս մեղդոյշ աշունքն, որ ինձի կ'նայէին, ապա դուռը կ'բացուէր, և իմ հռոմէական սենեակս կ'մտնէի աղջկան առաջնորդութեամբ: Այս ճամբան տրոխլու համար բաւական ժամանակ անցուցի:

Իմ սենեակս Գօրսօյն վրայ էր, և անկից կարող էի նշմարել Անտոնինոսի բարձր կոթողին ծայրն և կառավարչին սլաքատին մէկ մասը: Իմ սրահս՝ որ նրբագութով մը կ'զատուէր ընտանիքին սենեակներէն, փոքր բակի մը վրայ կ'նայէր որու շուրջն արեւակներ կային: Բարձրադոյն արեւակէն երկու սեւակն օրիորդներ տտեն աստեն դուռն կ'նային, և զրեթէ կարող են կարգաւ իմ զրբիս անունն երբ պատուհանը նստիմ: Վարն երեք չորս ծաղկահասակ տղաք կան որ սեւ աշեր և հռոմէական առատ մազեր ունին: Ամենէն փոքրն Էնրիքային բարեկամն է, և բնապէս վեր կ'նայի շատ անդամ խիստ անմեղ կերպով, որպէս զի դիտէ թէ արդեօք Էնրիքա դուռն կ'նայի՞ թէ ոչ:

Ամեն գիշեր պայծառ կրակ մը կ'վառի վառարանի մէջ լաստենի փայտերով զոր Ալբանեան բլուրներէն կ'բերեն: Դոյնպէս ամէն գիշեր ընտանիքն իմ սենեակս կ'գայ որպէս զի իմ իտալերէն սխալներս ուղղէ և կրակիս բոցավառ տեսքը վայելէ: Փոքրիկ Կեսարէն՝ թխագոյն իտալացի տղայ մը, մասիսն ու սեւ քարը կ'առնու և՛ բոցին նշույլով՝ բէրիներ ու զղեակներ կ'ղծադրէ: Էնրիքայի միականի դաստառուն իր քթմախոտի առփոյն սեղանին վրայ կ'դնէ, իր թաշկինակը ծնկաց վրայ, և ակնոցները քթին վրայ, և հաստ մատը դասադրբին վրայ ֆրանսերէն ամօր (սիրել) բային այլ և այլ ժամանակները խոնարհելով կ'անդնի: Տան հայրն ածղոյն և սրակն մարդ մը, ճշմարիտ իտալացի դէմքով, թեւերն աթոռին արմուկներուն վրայ դրած կ'նստի, և Պապին

կամ՝ օղին վրայ կ'իսօսի։ Անթոնայի սահմաններէն պահապարդ Աոմս ժը  
ժամայոյցի ծանր կնիք մը կ'զրէ, և Տանդէն կ'կարգայ Կապաղըէն։  
Մայրն՝ թեւերը ծալլած՝ իր աղջկան վրայ կ'նայի հպարտութեամբ և  
զանի հոգեմայեցի օրիորդներու մէջ անսման դոհար մը կ'համարի, և ի-  
ջաւամբ։

Սեղանը կըր էր, մէկ կողմէն կրակը կ'վառէր, միւս կողմին առ-  
ջև հալիւ երեք հոգւոյ համար տեղ կար։ Մինն էր պարոն Կապաղը, միւսն  
Էնրիքան, և անպա — ինչպէս լաւ կ'յիշեմ — ես էի։ Վասն զի  
երբեմն Էնրիքայի կրնայի օղնել Փրանսերէն բառ մը դանելով, և ինքն  
ալ աւելի յաճախ առիթ կ'դոնէր օղնելու ինձ խոսքերէն համար։ Իր  
գէմքը կայտառ և զգացումով լի էր, սովոր էի զիտել խնդաղին իր  
ճակատն՝ երբ քանի մը խրթին բառերու իմաստը չկրնալով բմբռնել  
զայն կ'խորշումէր, և անմասնադ կ'տեսնէի սիրուն ժպիտն երբ ինկոյն  
կ'ըմբռնէր Փրանսայի հին հեգինակի մը միտքն և զայն իր գիւրասահ  
անուշ լեզուովը կ'բացատրէր։

Այն ինչ Էնրիքա տառնալեց ամառ տեսեր էր, և նոյն դարձան իսկ՝  
Հռոմի շրջակայքը զանաւոր վանքի մը գերութենէ աղատեր էր։  
Աեանքն ինչ է չգիտէր, բայց միայն զգացման կեանքը, և ամէն եր-  
ջանկութեան խորհուրդ դեռ ևս իր մանկային յոյսերն էին։ Ախորժելի  
էր նայիլ իր երեսն, և աւելի ախորժելի՝ լսել իր անուշ հռոմէական  
ձայնը։ Ինչ գերադասական և նուազական ածականներ կ'հոսէին առա-  
ւորէն այն վարդապետի շրթերէն։ Որ անձն այսպիսի պարագայի մէջ  
չսկիտի սիրէր ճաւանջնքն, և ող, առանց գիտնալու, չսկիտի սիրէր ու-  
սուցիչը։

Այն օրերն Հռոմի սրճարանները գեղերելու փափաք չունէի, այլ  
իմ օթեանիս փոքրիկ սրահը կ'ըստնայի ընդ փոյթ. քանի հրճուելի  
էր կրակը։ Եւ քանի հրճուելի էր Էնրիքան բարեւել իր մօրը հետ,  
միականի վարպետը գալէն առաջ, և ախորժելի էր գիրքը մեր մէջ  
բանալ և ձեռքս թղթին վրայ դնել — փոքրիկ թղթի երես — ուր ի-  
րենն արդէն գրուած էր։ Եւ երբ նա շիտակ չէր նշահակեր, ախոր-  
ժելի էր ուղղել մասն, կրկին և կրկին, սխալելով թէ իր ձեռքը պար-  
տի դնել այն կողմը քան թէ այն կողմը, և իր փոքրիկ մատերն վերցը-  
նելով մէկ երեսէն ուրիշ երեսի մը վրայ։ Եւ երբեմն երբ կ'բարկանար  
վրիպակները ցոյց տալու, իր ձեռքն իմն ուժղին կ'զարնէր, բայց  
երբ իր երեսը կ'նայէր հարց ու փորձ ընելու համար թէ ինչ կ'նշա-  
նակէր իր շարժումն, այնպէս հեզ և վշտաղին աչօք կ'նայէր ինձ որ

կ'ստիպուէի ոչ միայն իր թշնամական ընթացքին ներել, այլև իր դողուէր զիս կերպով մ'որ վերստին իր սրտմտութիւնն իմ վրայ հրաւիրեմ:

Բարեկենդանի բոլոր օրերն՝ երբ զլիսուս անուշեղէն կ'տեղար, իմ աչքս սովոր էր թափառել հեռուէն, Գօրսօի վրայ դանդաղ բարձր տան կողմն, ուր ստոյգ էի դանել միշտ սոյն ներողամիտ աշունքն, և այն փափուկ խաբոն շմաղէրը՝ որ լոկ մէկյտտակ փետրով զարդարուած գլխարկի մը ներքեւ ամփոփուած էին: Եւ իր ձեռքը շաքարեղէնով լի՝ ինձի կ'ցուցնէր սպառնալի. և ծիծաղ մը — երաժշտական ծիծաղ մը կ'ձգէր, երբ այսյարձակման դէմ զլուխս կ'ծռէի. ապա գնդակներու տարափն անցնելուն՝ իմ ամենէն խոշոր փունջս անոր արեւնակին կ'նեւտէի: Գիշերն իմ սրահս կ'տանէի օրուան լաւագոյն յաղթանակս իբրեւ տրիտուր մը Խնրիքային համար. և Խնրիքա այս նուէրիս փոխարէն չէր մոռնար խնամօք պահուած և իր դեղեցիութեան շահած ամենասիրուն ծաղիկներ ընծայել ինձ:

Այս բարեկենդանի օրերն՝ Խնրիքա երբեմն Ալբանեան ջրկիրներու պէս կ'ծպտի, և արդարեւ չկայ աւելի չքնաղ բան մը քան իր հազած ծիրանեղջյն բաձկնակը, զլիսի տարօրինակ գդակն իր հտադանքով, և կարճ ժապաւէններն՝ որ Հռոմի ամենէն քնքուշ սրուսքն 'ի տես կ'ընծայէին: Ուրիշ գիշեր մ'ալ մինչդեռ կրակին առջեւ նստած ենք, իմ փոքրիկ սրահս կ'մանէ, թաշէ նեղ լանջապանակ մը հաղած, և հեշ վէտիական գդակ մ'որ արծաթ օղակով մը բռնուած է և լիւծի վարդով մը զարդարուած, կրնաս երեւոյթել որ ասոր պէս սիրուն կերպարան մը չէր կրնար լինիլ: Գարձեալ իր մանկային խաղերուն մէջ՝ մի անգամ մարապետի հաստ ու սև կտաւէ զոստը կ'հագնի, սղալի քօղն երեսը, որ վեր ելած է միայն գդակին սլորը սպիտակ կաշիէն. և իր փափաքիս որ նէ միշտ մարապետ լինէր: Բայց այս փափաքդ կ'մարի երբ յանկարծ զինք սպիտակ բեհեղով հագուած՝ ճակատն նարնջի ծաղկօք շինուած պսակ մը բոլորած, և լոկ սպիտակ վարդի կոկոն մը կտրծքին դրուած կ'աեսնես:

Խնրիքա փոքրիկ արեւնակին վրայ մէկ երկու թաղար կ'պահէ, որ բոլոր ձմեռը ծաղկալի են. ամէն առտու սեղանիս վրայ թարմ վարդի կոկոն մը կ'գտնեմ, ամէն գիշեր՝ իբրեւ շնորհապարտ տրիտուր, ամենասիրտ փունջ մը դնելով օրիորդին կ'երեմ: Արեստին կ'դառնան սոյն գիշերներն երբ հանգարտ կ'անցնենք կրակաբանին մօտ, իմ ձեռնս քէրա գրգռել վրայ կ'փնտռէ ցակալի վայրն, իսկ իմ միւս ձեռնս Խնրի-

քայլի աթոռին թիկնակին վրայ կ'սահի բոլորածն , և Էնրիքա կ'սկսի սրամտիլ և ապա բոլորովին ներողամիտ երեիլ :

Օր մը համակի մեծ ծրար մ'առի : Ա՛հ , քանի՛ հեշտալի է լայն թիկնաթոռի մը մէջ չարուիլ ճարձատուն խարոյիլի մ'առջն , մինչդեռ քովէ մետաքսեայ շրջադեասին մը քաղցրալուր շրշունը կ'լսես . ապա երկրորդ և երրորդ անգամ՝ աչքէ կ'անցնես այն անձայն համականին , որ հարկաւոր մղոններով հեռի տեղերէն շնորհաւորութեան և սիրոյ խօսքեր կ'բերեն քեզ . . . : Էնրիքա իր գիրքը վար նետեց և հետաքրքիր եղաւ իմանալու թէ ի՞նչ կան նոյն համակներուն մէջ . ուստի հաս մը ձէռքէս կ'ըղեց և անոր տարօրէն զիրեն տրտմալ ընդունայն մտադրութեամբ գիտեց : « Կ'նշ կրնայ լինիլ » ըսաւ նէ , և իր մաստը կէս տողին վրայ դրաւ , որ էր « Սիրելի Պօղ » :

Ըսի ներա որ « Caro mio » էր (սիրելիօ իմ) :

Էնրիքա թուղթը ծնկացը վրայ դրաւ և իմ երեսս նայեցաւ :

« Միթէ մօրդ կողմէ է այս » հարցուց նէ :

« Ա՛յ » ըսի ներա :

« Քրճիկ կողմէ » ըսաւ նէ :

« Ափսոս , ո՛չ » :

« Il vostro fratello, dunque » (ուրեմն եղբորդ կողմէ) :

« Nemmeno » ըսի « և ոչ եղբորս կողմէ » :

Էնրիքա համակնյանքնեց և զիբքն առաւ . սակայն քիչ մ'իտքը դիւքը նորէն գետնը գրաւ , և նախ համակին և ապա ինձ նայելով՝ Ելաւ դուրս գնաց :

Նոյն իրկուն վերստին ներս չեկաւ . առաւօտուն՝ սեղանիս վրայ վարդի կոկոն չտեսայ , և երբ զիշերը փնջով մը վերադարձայ , նէ հարցուց ինձ . « Ո՞վ դրեր էր ստացած գիրս » :

« Յոյժ սիրական բարեկամուհի մը » պատասխանեցի ներա :

« Այն մ'է » շարայարեց նա :

« Այն մը » ըսի :

« Այս փունջն անոր համար պահէ » ըսաւ նէ « և զայն ձեռքս առաւ » :

« Բայց , Էնրիքա , այն կէնը շատ ծաղիկներ ունի , անոնց մէջ կ'ապրի , և ամէն առտու իր զաւակներն առատօրէն կ'աղէն որպէս զի իրեն համար պսակներ յօրինեն » :

Էնրիքա նորէն մատերը ձեռացս մէջ դրաւ որ փունջն առնու , և պահ մը թէ մատերն և թէ փունջը սեղմեցի :

Օտղիկներն ամենէն առաջ վար սահեցան :

Հռոմի մէջ բարեկամ մ'ունէի որ վերջէն Անքոնայի և Կորնթոսի մէջ մեռաւ . օր մը Քօլիլէի մէջ՝ հողակոյտի մը վրայ միասին նստած՝ կ'դիտէինք այն ստուերներն զոր հաբաւային սլատին վրայ գտնուող երերուն թփեր ներքին կիսափուլ կամարներուն վրայ կ'սփռէին , և մտիկ կ'ընէինք աւերակներու վրայ դադարող ճնճղուկներուն ձայնն , երբ նա յանկարծ ըսաւ ինձ . «Պօղ , դու խաւացի օրիորդը կ'սիրես» :

«Հատ զեղանի է նէ» ըսի անոր :

«Կարծեմ՝ թէ նէ կ'սկսի քեզ սիրել» ըսաւ նէ տրտմազին :

«Հատ տաք սիրտ ունի , կարծեմ» ըսի ես :

«Այո» ըսաւ նա :

«Բայց ներս զգացումները մանկային են» շարունակեցի ես :

«Մանկային չնո՞ւր ըսաւ բարեկամս , և ձեռքը ծունկիս վրայ դրաւ , և դառաղանովն դծեր սկսաւ շինել հողին վրայ : «Ես , Պօղ , քեզնէ լաւ կ'ճանչեմ այս հաբաւային օրիորդները : Տանհիշիկ տարեկան օրիորդ մը ստէպ կ'ին մ'է — եռանդոտ , զգայուն , քնքուշ էակ մ'է իրաւ , այլ սակայն կ'ին մը . դու կ'սիրես , եթէ իրօք սիրահար ես , լիակատար սիրտ մը . նէ կ'սիրէ , եթէ իրօք սիրահար է , իբրեւ հասուն սիրտ մը» :

«Բայց ես չեմ կարծեր որ այդ ըսածներդ լիովին ճշմարիտ լինին» ըսի ես :

«Փորձէ՛ք ըսաւ նա՝ գտազանք վար դնելով և երեսս նայելով :

«Ի՛նչպէս» տատասխանեցի ես :

«Գեռ ևս երեք շաբաթ ազատութիւն ունիմ» շարայարեց նա : Արի միասին Ապէսինեսանց կողմերն երթանք . թող Գօրսօր բնակարանդ , և տես մի անգամ թէ արդեօք պիտի կարենան մոռնալ քու կապուտակն հռոմայեցի աղջիկդ լեռնային բաց օդին :

Պատասխան մը տալու համար կ'մտմտայի , երբ նա շարունակեց .

«Այսպէս լաւագոյն է , որչափ կարող ես սիրէ , այս հարաւարնակ էակն՝ իր բոլոր խանդով՝ ընտանեկան երջանկութիւն հայթայթող հանգամանքը չունի , իսկ քու հիւսիսային բարքդ ևս չէ կարող միշտ գոյել այն խանդալից համակրութիւններն որ այս մթնոլորտին և անդուդ տեսարաններուն միջոցաւ կ'անանին :

Պահ մ'իմ միտքս փոքրիկ սրահիս , այն գեղանշույլ կերպարանին և այն հրեշտականման անուշդէմքին թռաւ , ապա՝ կայծակի տէս ծովերէն անցաւ և հայրենի տան հին յիշատակներս գրգռելով անհետ ե-

ղած նկարներ բերաւ ինձ, որ կարծես թէ երկնային թն երու վրայ կը շարժէին այս հռոմէական փափուկ մթնոլորտին մէջ՝ և ինձ ողջոյններ և ակնարկներ կ'ուղղէին :

«Քեզի հետ պիտի գամ» ըսի անոր :

Տանտէրն ուները թոթուեց երբ ըսի անոր որ լեռները պիտի գնամ և առաջնորդի մը պէտք ունիմ : Իր կիներն ըսաւ թէ բլուրներուն վրայ շատ ցուրտ պիտի լինի, վասն զի դեռ ձմեռը կ'աւելէր : Լնրիքա ըսաւ թէ հովիտներու մէջ տաք պիտի լինի, վասն զի գարունը դալու մօտ էր : Ծերունին մասերը սեղանին վրայ թմրկեց, և դարձեալ ուները շարժեց . բայց բան մը չըսաւ : Տան տիրուհիս ըսաւ որ չեմ կրնար ձիաուորել : Կեսարէ յայտնեց թէ դժուարին պիտի լինի ուղևորութիւնը : Էնրիքա հարցուց հօրը թէ արդեօք վտանգ կ'այ : Իսկ ես վերստին խնդրեցի որ ինձ առաջնորդ մը գտնէ, և երբ ծերունին անաւ որ դիտաւորութեանս մէջ հաստատ եմ՝ խօսք տուաւ հետեւեալ օրն առաջնորդ մը գտնել :

Երբ իրիւնն Մօնդէ Զիթօրիօի մօտ հրապարակը պարտելու կ'երթայի, ուր Թիվօլի երթն եկող կառքերը կ'իկնան, Էնրիքա իմ քովս սահեցաւ և փափայ. «Ah, mi dispiace tanto-tanto, Signor!» (Ահ, քանի ծանր է ինձ այդ, պարոն) :

## ԱՊԵՆԻՆԵԱՆ ԼԵՌՆԵՐ

Հրաժարական բարեւ տուի, և ժամէ մ'իմ բարեկամիս հետ Տրա-յիանու հրապարակին անցնելով՝ Սան-Մաճիօրէի մութ ծմախներու կողմը կ'ըլմէի որ մեր ճամբուն վրայ լեռներու ուղղութեամբ կ'երեւէին : Արևը մարը մանելու ատեն Ազրիանու դիւղաքաղքին աւերակներու մէջ կ'ընկնէինք, որ Ապենինեան լեռներու առաջին շղթային վրայ կ'տեսնուի : Մեր ետեւն՝ Թիվօլիի երկկոյնեան ժամերդութեան զանգակը կ'հնչէր, և անոր արձագանքն կիսափուլ կամարներու ներքեւ քաղցրալուր կ'տատանէր . մեր առջեւն՝ մինչև հորիզոն՝ ընդարձակ կամ պանխան կ'տարածուէր, մինչդեռ իր կոհակներուն միջև, որ վերջալուսին նշոյլներով մանիշակաղոյն կ'երևէր, Յաւիտենական Քաղքին բազմախումբ աշտարակները կ'արձրանային, և ասոնց ամենուն վրայ՝ իբրև հսկայ կ'տիրապետէր Ս. Պետրոսի սևաթոյր գմբէթը :

Օր ըստ օրէ գէտ 'ի լեռները դիմելով՝ Կամպանիան մեր ետեը կը  
 թողլայինք : Ահադին ու պատառուն ժայռեր ու քարեր , աջ ու ահեակ  
 սփռուած կ'մնային . խոր հովիտներ հաղարաւոր ոտք բարձր լեռներու  
 ստուերներու ներքեւ կ'տեսնուէին՝ որ թերեւ իրենց կատարներու վրայ  
 հին ամրափակ քաղաքներ կ'սահէին թռչուններու բոցին պէս : Բայց  
 լեռ ու ձոր այրած և աւերուն են , նոյն խոլ անտառները ցանցաւ ,  
 վառն դի ճարակ չունին , որպէս թէ Գինուէն այրող ծծմբային հուրն  
 իրենց զօրութիւնը սպառած լինէր : Երբեմն մեր աչքը կ'դադարի  
 հասուկոտոր հրային ասպառածի մը խոշոր ու ոտխտի պատառուածին  
 վրայ , որու վրայ լոռը չէ կարող աճիլ և մողէսը չհամարձակիր մագ-  
 լելու : Ապա կ'նշմարենք երկնաբերձ սեպածեւ ժայռ՝ որու ստորոտը կը  
 շողայ ճիւղաբանի մը պատերը : Կողմնակի գետակներն ջրաբուղի բրա-  
 յին անուշադրի բներու արդիւնքը չեն երեւիր , այլ մեծազոյն դետերու  
 մնացորդն , որոյ մեծութիւնն անհետ եղած է . սղաոր վտակներ են ա-  
 նոնք՝ որ պատուաւ քարերու մէջ կ'հոսին : Նոյն թփերն այնպիսի  
 երեսյթ մ'ունին որպէս թէ Ասիկեան պատերազմի կրիվարն ոտնա-  
 հար ընելով չորցուցեր է , և դարնան ծաղիկներն ու մանիշակները մի-  
 այն լեռան շաւիղներուն մօտ սիրուն և չքնաղ համեստութեամբ կ'երե-  
 ւին աւերակներուն մէջ :

Երբեմն հովտի մը մէջ կ'ըջնայ . մեր գլխին վերեւն նոխալները կ'ա-  
 րածին առապաւններու վրայ , և Ապենինեանց հովտական սրինդները  
 մտիկ կ'ընենք . կ'տեսնենք հովիտներն՝ իրենց մորթէ կոշտ վերաբլուզով  
 ծածկուած՝ լեռնակներու կատարը : Իրենց հօտը կ'ճարակի խիստ ան-  
 ձուկ եղրերու վրայ , նուաղարանին ձայնն կ'ծփայ և կ'տատանի մեղմ  
 մթնոլորտին մէջ , հովի շունչ մը չկայ որ զայն վանէ , կամ շշուկ մ'որ  
 անոր ներդաշնակութիւնը վրդովէ : Ստուերներն փոքր առ փոքր կ'սո-  
 տորին մինչդեռ մենք կ'զեղերինք , և ուլերը կ'սկսին նոյն վայրը հա-  
 ւաքուիլ : Եւ քանի մենք՝ հովտին խորն , այդիներուն մէջէն քիչ առաջ  
 կ'քալենք , անուշ ձայնը մեր ետեւէն կ'հոսի երգի առուակի մը պէս , և  
 մեղ չթողուր մինչև որ հեռուն ուլերն անհետ կ'լինին և նոյն խոլ ցից  
 ժայռերն ստուերային մութ սլաւ մը կ'գառնան :

Գիշերն՝ լեռնային անշուք փոքր քաղքի մը զուհիները կ'դառնանք  
 կամ եկեղեցիներու ծանրակիր կամարներու ներքեւ կ'թափառինք : Այ-  
 լանդակ սլառաւ կիներ ներս կ'մանեն կ'երևեն . կողմնակի խորաններու  
 վրայ աղօտ կանթեղներ կ'փափլին և հողեսպառ Գրիստոսի նկարներու  
 վրայ ահաւոր լոյս մը կ'սփռեն . . . . . :

Խմբագիր—Տնօրէն Մ. ՄԱՄՈՐԻՐԵԱՆ